ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

0010, ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 5

N 36-812-19

«11» 03 2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սիմոնյան,

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված կարգով՝ ներկայացնում եմ ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Տարոն Անդրանիկի Մարգարյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին միջնորդագիրը և պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծը:

Առդիր՝ միջնորդագիրը՝ «59» թերթ, ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծը՝ «1» թերթ:

Հարգանքով,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

0010, ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 5

N 36-812-19
«11» 03 2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ր

ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Տարոն Անդրանիկի Մարգարյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին

ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական դիրքի և «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի ծառայողների կողմից իրենց լիազորությունների չարաշահմամբ Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցի թիվ 5 հասցեում գտնվող՝ «Թիվ 185 հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման հանձնված, պետական սեփականություն հանդիսացող 15.523 քմ մակերեսով հողատարածքից ապօրինի 3.581,43 քմ մակերեսով հողատարածք առանձնացնելու և օտարելու դեպքի առթիվ 2018 թվականի օգոստոսի 9-ին ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով և 214-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է թիվ 58217318 քրեական գործը:

2019 թվականի նոյեմբերի 6-ին թիվ 58217318 քրեական գործն ընդունվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության վարույթ:

Բացի այդ, ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության և Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական դիրքի չարաշահմամբ Երևան քաղաքի Աճառյան փողոցի 40 հասցեում գտնվող՝ «Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի զբաղեցրած 13.172 քմ մակերեսով հողատարածքից

ապօրինի 3.596,8 քմ մակերեսով հողատարածք առանձնացնելու և օտարելու դեպքի առթիվ 2020 թվականի հունիսի 23-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 17108920 քրեական գործը:

2020 թվականի հունիսի 29-ին թիվ 17108920 քրեական գործն ընդունվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության վարույթ և նույն օրը միացվել թիվ 58217318 քրեական գործին:

Բացի այդ, Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական դիրքի և «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի ծառայողների կողմից իրենց լիազորությունների չարաշահմամբ Երևան քաղաքի Ավանեսովի փողոցի 12 հասցեում գտնվող՝ «Երևանի թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի զբաղեցրած 6453 քմ մակերեսով հողատարածքից ապօրինի 580,63 քմ և 863,34 քմ մակերեսներով հողատարածքներ առանձնացնելու և օտարելու դեպքերի առթիվ 2018 թվականի հուլիսի 3-ին ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով և 214-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է թիվ 58214218 քրեական գործը:

2020 թվականի մարտի 4-ին թիվ 58214218 քրեական գործն ընդունվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության վարույթ, իսկ 2020 թվականի հուլիսի 29-ին որոշում է կայացվել թիվ 58214218 քրեական գործը թիվ 58217318 քրեական գործին միացնելու մասին:

Նախաքննության ընթացքում որոշում է կայացվել թիվ 58217318 քրեական վարույթից թիվ 69113821 քրեական վարույթն անջատելու մասին:

Թիվ 69113821 քրեական վարույթն ըստ մեղադրանքի՝ Արման Գալուստի Սահակյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, Տարոն Անդրանիկի Մարգարյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (3 դրվագ), Անդրանիկ Մազմանի Քասարյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (4 դրվագ) և 314-րդ հոդվածի 1-ին մասով (4 դրվագ), Արսեն Սերյոժայի Ամյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (4 դրվագ), Հայկ Արտուշի Կյուրեղյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով և 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասով, Արամ Արտավազդի Ենգոյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով, Տիգրան Կարլենի Փոթիկյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով, Միքայել Լևոնի Հակոբյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի

2-րդ մասով, Հայկ Հենրիխի Պետրոսյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով, 2021 թվականի դեկտեմբերի 30-ին կազմված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, որին շնորհվել է ՀԿԴ/0051/01/23 դատաքննական համարը:

ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի մայիսի 10-ի թիվ ՀԿԴ/0051/01/23 որոշմամբ Արամ Ենգոյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ ՀԿԴ/0051/01/23 որոշմամբ Հայկ Կյուրեղյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով և 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ Միքայել Հակոբյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ ՀԿԴ/0051/01/23 որոշմամբ Հայկ Պետրոսյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ ՀԿԴ/0051/01/23 որոշմամբ Տիգրան Փոթիկյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի փետրվարի 4-ի թիվ ՀԿԴ/0051/01/23 որոշմամբ Արման Սահակյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, Տարոն Մարգարյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (3 դրվագ), Անդրանիկ Քասարյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (4 դրվագ) և 314-րդ հոդվածի 1-ին մասով (4 դրվագ) քրեական հետապնդումը դադարեցվել է՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

Երևանի քաղաքապետարանի և ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության իրավասու աշխատակիցների կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով, հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գույքից՝ Երևան քաղաքի Հ.Բեկնազարյան փողոցի 5 հասցեում գտնվող՝ «Թիվ 185 հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի, Երևան քաղաքի Աճառյան փողոցի 40 հասցեում գտնվող՝ «Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի և Երևան համայնքի սեփականություն հանդիսացող «Երևանի թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի զբաղեցրած հողատարածքներից անհիմն որոշակի մակերեսով հողատարածքների փոխարկում (կոնվերտացում) կամ փոխանցում իրականացնելու դեպքի առթիվ 2024 թվականի դեկտեմբերի 4-ին ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցագործության հատկանիշներով նախաձեռնվել է թիվ 69138024 քրեական վարույթը:

2024 թվականի դեկտեմբերի 28-ին որոշում է կայացվել թիվ 69138024 քրեական վարույթը թիվ 58217318 քրեական վարույթին միացնելու մասին:

Բացի վերը նշված պաշտոնատար անձանցից, առերևույթ հանցագործություններին՝ առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման կատարմանը, Երևանի քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի, Էրեբունի վարչական շրջանի, Երևան քաղաքի Աճառյան փողոցի 40 հասցեում գտնվող՝ «Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի, Երևան քաղաքի Ավանեսովի փողոցի թիվ 12 հասցեում գտնվող՝ «Երևանի թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի և Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցի թիվ 5 հասցեում գտնվող՝ «Թիվ 185 հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի իրավասու պաշտոնատար անձանց, ինչպես նաև պաշտոնատար անձ չհանդիսացած, սակայն հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկման (կոնվերտացման) կամ փոխանցման գործընթացին այլ անձանց մասնակցության դեպքի առթիվ 2025 թվականի հունվարի 21-ին ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով նախաձեռնվել է թիվ 69102425 քրեական վարույթը, որը նույն օրը միացվել է թիվ 58217318 քրեական վարույթին:

Բացի այդ, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի կողմից, որի վրա իրավական ակտերով դրված է եղել պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, շենքերի և շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու պարտականությունը, Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցի թիվ 5 հասցեում գտնվող՝ «Թիվ 185 հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ին հատկացված և պետական սեփականություն հանդիսացող հողամասն ինքնակամ զավթած անձանց

նկատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ դիտավորությամբ չկիրառելու դեպքի առթիվ 2025 թվականի փետրվարի 19-ին ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 315²-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով նախաձեռնվել է թիվ 69107125 քրեական վարույթը, որը 2025 թվականի փետրվարի 20-ին միացվել է թիվ 58217318 քրեական վարույթին:

Թիվ 58217318 քրեական վարույթի նախաքննությամբ ձեռք են բերվել փաստական տվյալներ այն մասին, որ Տարոն Անդրանիկի Մարգարյանը, 2009 թվականի հուլիսի 6-ից մինչև 2011 թվականի նոյեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում զբաղեցնելով Երևանի քաղաքապետի առաջին տեղակալի պաշտոնը, իսկ 2011 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2018 թվականի հուլիսի 9-ն ընկած ժամանակահատվածում՝ Երևանի քաղաքապետի պաշտոնը, այսինքն՝ հանդիսանալով տեղական ինքնակառավարման մարմնում մշտապես կազմակերպական-տնօրինչական և վարչատնտեսական գործառույթներ իրականացնող, քաղաքապետարանի անունից հանդես գալու լիազորություն ունեցող, իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, շահադիտական և անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով՝ չարաշահել է իր պաշտոնեական լիազորությունները, որն էական վնաս է պատճառել պետության և համայնքի իրավունքներին և օրինական շահերին, ինչն էլ անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, ինչպես նաև այլ անձանց օժանդակությամբ, պաշտոնեական դիրքն օգտագործելով, օրինականացրել է հանցավոր ճանապարհով ստացված՝ առանձնապես խոշոր չափերով գույք, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ չի կիրառել պետական սեփականություն հանդիսացող հողամասն ինքնակամ զավթած անձանց նկատմամբ:

Այսպես.

Տարոն Մարգարյանը, ՀՀ պետական գույքի կառավարման վարչության պետ Արման Սահակյանի հետ ունենալով մտերիմ փոխհարաբերություններ և նպատակ ունենալով Երևան քաղաքի «Թիվ 185 հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված և ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությանն ամրացված՝ 15.523 քմ մակերեսով, պետական սեփականություն հանդիսացող հողատարածքից հանցավոր ճանապարհով առանձնացնել 1.939,029քմ մակերեսով հողատարածք, ապա այն օտարել իր և Արման Սահակյանի հետ փոխկապակցված անձանց, Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց հետ նախապես պայմանավորվել է նշված գույքն ապօրինի առանձնացնելու եղանակով դուրս բերել պետության գույքային ֆոնդից և մտցնել Երևանի քաղաքապետարանի գույքային ֆոնդ, այնուհետև ակնհայտ հանցավոր ճանապարհով այն դուրս բերել Երևանի քաղաքապետարանի գույքային ֆոնդից և ձևականորեն մտցնել այլ անձանց գույքային ֆոնդ, ինչից հետո հիշյալ գույքի ձեռքբերումն օրինական գործունեության շրջանակի ներքո

լեգիտիմացնելու նպատակով դրա նկատմամբ ձևականորեն ձեռք բերված սեփականության իրավունքի մաս կազմող՝ տնօրինման իրավազորության իրականացման միջոցով այն օտարել իր մերձավորներին՝ այդպիսով առանց խոչընդոտների օրինականացնելով հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը:

Նշված հանցավոր մտադրության իրականացման նպատակով Արման Սահակյանը, շահադիտական դրդումներով և անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով՝ իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, դպրոցի տնօրեն Համլետ Քարամյանին առաջարկել է դպրոցի տարածքը բարեկարգելու պատրվակով կատարել դպրոցի սահմանների ճշտում և դրա տարածքից դուրս բերել նախկինում այլ անձանց կողմից ապօրինի կառուցված ավտոտնակները: Ի կատարումն Արման Սահակյանի հետ ձեռք բերված պայմանավորվածության՝ Համլետ Քարամյանը 2013 թվականի օգոստոսի 27-ին ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն է ներկայացրել Արման Սահակյանին հասցեագրված դիմում՝ հայտնելով, որ դպրոցի տարածքում կառուցված ավտոտնակները փաստացի չեն օգտագործվում դպրոցի կողմից, շահագործվում են այլ անձանց կողմից, ուստի խնդրել է սահմանների ճշտման արդյունքում ավտոտնակները դուրս բերել դպրոցի տարածքից:

Արման Սահակյանը, ստանալով Համլետ Քարամյանի կողմից իրեն հասցեագրված վերոգրյալ բովանդակությամբ դիմումը, անտեսել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով նախատեսված պահանջները և միջոցներ չի ձեռնարկել՝ նշված ինքնակամ կառույցներն ապամոնտաժելու ուղղությամբ և 2013 թվականի սեպտեմբերի 28-ին հիշյալ դիմումն ուղարկել է Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին՝ խնդրելով հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը՝ կատարել հիշյալ դպրոցի սահմանների ճշտում: Տարոն Մարգարյանը, հիշյալ դիմումից տեղեկանալով պետական սեփականություն հանդիսացող հողամասի ինքնակամ զավթման մասին, իր հերթին անտեսել է տվյալ ժամանակահատվածում գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված պահանջն առ այն, որ համայնքի ղեկավարը հողօգտագործման բնագավառում օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները, դիտավորությամբ չի ձեռնարկել միջոցներ՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասի զավթումը կասեցնելու ուղղությամբ, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման կատարման, այն է՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու համար վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ չի կիրառել պետական սեփականություն հանդիսացող հողամասն ինքնակամ զավթած անձանց նկատմամբ: Հակառակը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, անտեսելով տվյալ ժամանակահատվածում գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված պահանջն առ այն, որ համայնքի ղեկավարը հողօգտագործման բնագավառում օրենքով սահմանված կարգով

վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ, Երևանի քաղաքապետարանի համապատասխան պաշտոնատար անձանց հետ հանցավոր համաձայնություն է ձեռք բերել այն մասին, որ բացի դիմումում նշված ավտոտնակներից, սահմանների ճշտման արդյունքում դպրոցի սահմաններից դուրս բերվեն նաև ավտոտնակների հետ չկապված, միմյանցից անջատ՝ դպրոցապատկան ևս երկու հողակտորներ:

Հիշյալ հանցավոր մտադրությունն իրագործելու նպատակով Տարոն Մարգարյանը և Երևանի քաղաքապետարանի համապատասխան պաշտոնատար անձինք, խմբային շահերից ելնելով, իրենց պաշտոնեական դիրքն օգտագործել են ծառայության շահերին հակառակ և Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի գեոդեզիստ Հայկ Պետրոսյանին և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության ճարտարապետ Էդուարդ Վարդանյանին հանձնարարել են կատարել «Թիվ 185 հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի սահմանների ճշտում և դրա արդյունքում կազմված նոր սահմանների հատակագծում դպրոցի տարածքից դուրս թողնել և դրա սահմաններում չներառել ավտոտնակների զբաղեցրած հողամասերը, ինչպես նաև իր և Արման Սահակյանի համար ցանկալի՝ դպրոցապատկան ևս երկու հողակտորները:

«Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի գեոդեզիստ Հայկ Պետրոսյանի կողմից առանց տեղում չափագրում և տեղագրական հանույթ կատարելու կազմված և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն ներկայացված՝ դպրոցի զբաղեցրած հողամասի սահմանների վերաբերյալ նոր տեղագրական հանույթի և հատակագծի հիման վրա՝ վարչության ճարտարապետ Էդուարդ Վարդանյանի կողմից կազմվել են ձևակերպման ենթակա սահմաններով նշագրված տարածքի սխեմաներն ու եզրակացությունը, որի համաձայն՝ դպրոցի զբաղեցրած հողամասի փաստացի մակերեսը կազմում է 11.761,57 քմ՝ նախկին գլխավոր հատակագծով սահմանված՝ 15.523 քմ-ի փոխարեն, և ներկայացվել վարչության պետ Անդրանիկ Քասարյանին:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Անդրանիկ Քասարյանը, տեղյակ լինելով, որ դպրոցի զբաղեցրած հողամասի սահմանների ճշտումը կատարվում է Տարոն Մարգարյանի և Արման Սահակյանի նախաձեռնությամբ, և, որ սահմանների ճշգրտման արդյունքում, բացի դիմումում նշված հողակտորից, դուրս են բերվել նաև վերը նշված երկու հողակտորները, անձնական շահագրգռվածությունից և խմբային շահերից ելնելով՝ իր պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ և 2013 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 18-06/1129 կեղծ գրություն-եզրակացությամբ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանին է փոխանցել կազմված սխեմաները:

Արսեն Ամյանը հիշյալ եզրակացությունն ուղարկել է Արման Սահակյանի մտերիմ՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավար Արտավազդ Սարգսյանին և

խնդրել պարզաբանել այն, ինչին ի պատասխան՝ Արտավազդ Սարգսյանը, նպատակ ունենալով միջոց տրամադրելու եղանակով օժանդակել «Թիվ 185 հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման հանձնված 15.523քմ հողատարածքից Արման Սահակյանի և վերջինիս մերձավորների համար հողատարածքներ ապօրինի առանձնացնելու և պետության գույքային ֆոնդից համայնքի գույքային ֆոնդ մտցնելու, այնուհետև համայնքի գույքային ֆոնդից Արման Սահակյանի և վերջինիս մերձավորների գույքային ֆոնդ մտցնելու գործընթացում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանի կողմից անձնական շահագրգռվածությունից և խմբային շահերից ելնելով՝ իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելուն, 2013 թվականի դեկտեմբերի 12-ի գրությամբ Արսեն Ամյանին հայտնել է, որ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Հ.Բեկնազարյան փողոցի 5 հասցեում գտնվող «Թիվ 185 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենք-շինությունների զբաղեցրած և սպասարկման տարածքի համար թողարկված 2002 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 2252-2002 գլխավոր հատակագծում ընդգրկված է ստորգետնյա ավտոտնակների շարք, որը դպրոցի կողմից ունի մոտ 3.0 քմ ռելիեֆային անկում, նշված հատվածը՝ որպես դպրոցի սպասարկման տարածք, չի կարող ծառայել, որպիսի պայմաններում էլ կատարված տեղազննման և տեղագրական ճշգրտված հանույթով նշված տարածքը չի ընդգրկվել «Թիվ 185 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զբաղեցրած տարածքի սահմաններում:

Հիշյալ գրությունն ստանալուց հետո Արսեն Ամյանը, տեղյակ լինելով, որ դպրոցի զբաղեցրած հողամասի սահմանների ճշտումը կատարվում է Տարոն Մարգարյանի և Արման Սահակյանի նախաձեռնությամբ, և որ սահմանների ճշգրտման արդյունքում, բացի դիմումում նշված հողակտորից, դուրս են բերվել նաև վերը նշված երկու հողակտորները, անձնական շահագրգռվածությունից և խմբային շահերից ելնելով՝ իր պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ և կազմել Երևանի քաղաքապետի՝ Տարոն Մարգարյանի որոշման նախագիծ, որում, հիմք ընդունելով վերը նշված եզրակացությունը, սահմանել է, որ «Թիվ 185 հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի զբաղեցրած հողամասի փաստացի մակերեսը 15.523 քմ մակերեսի փոխարեն իբրև թե կազմում է 11.671,57 քմ՝ առաջարկելով չեղարկել նախկինում թողարկված գլխավոր հատակագիծը և փոխարենը թողարկել նորը:

Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի՝ 2014 թվականի փետրվարի 3-ի թիվ 284-Ա որոշմամբ հիշյալ նախագիծը հաստատվել է և թողարկվել է նոր հատակագիծ, որով խախտվել է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված՝ «պետական ուսումնական հաստատությունների գույքն օտարվելու դեպքում կարող է օգտագործվել միայն ուսումնական նպատակներով» պահանջը, ինչպես նաև ՀՀՇՆ «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» նորմի պահանջը, ըստ որի՝ պետք է հատկացվեր 33 քմ × 1000 աշակերտ = 33. 000 քմ (3.3հա) մակերեսով հողամաս, ինչը հողամասի մակերեսի նորմերով թույլատրելի 20%-ի փոքրացման դեպքում կարող էր կազմել 26. 400 քմ (2.64հա), այսինքն՝ Երևանի քաղաքապետի՝ 2002 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ

2446-Ա որոշումով դպրոցին տրամադրված (դպրոցի զբաղեցրած) 15.523քմ (1.5523 հա) հողամասի մակերեսը սահմանված նվազագույն նորմերից արդեն քիչ էր 1.09 հա-ով, Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցի թիվ 5 հասցեում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող «Թիվ 185 հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման հանձնված 15.523 քմ մակերեսով հողատարածքն այդ կերպ անհիմն նվազեցվել է 3. 851,43 քմ մակերեսով, որն ընդունվել է որպես համայնքային սեփականություն: Դրանից հետո Տարոն Մարգարյանի նշված որոշումը և դպրոցի նոր հատակագիծը ներկայացվել են ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն, որտեղից էլ՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում կատարելու և սեփականության իրավունքի գրանցման վկայական տրամադրելու համար:

Դրանից հետո Տարոն Մարգարյանը Երևանի քաղաքապետարանի գույքային ֆոնդ մտցված նշված 3.851,43 քմ ընդհանուր մակերեսով երեք առանձին հողատարածքներից 1.939,029 քմ ընդհանուր մակերեսով երեք առանձին հողամասերը ներկայացրել է աճուրդի, մասնավորապես՝ նշված հողատարածքից 1.151,464 քմ մակերեսով հողամասը ներառվել է Հ. Բեկնազարյան փողոցի 5/2 հասցեի 1.333,25 քմ մակերեսով աճուրդի ներկայացվող հողամասում, 145,478 քմ մակերեսով հողամասը ներառվել է Հ. Բեկնազարյան փողոցի 5/17 հասցեի 1.138,76 քմ մակերեսով աճուրդի ներկայացվող հողամասում, իսկ 642,087 քմ մակերեսով հողամասը ներառվել է Հ. Բեկնազարյան փողոցի 5/18 հասցեի 1.092,85 քմ մակերեսով աճուրդի ներկայացվող հողամասում, և օտարել, ինչի արդյունքում դպրոցը զրկվել է 3.851,43 քմ ընդհանուր մակերեսով հողատարածքն ուսումնական նպատակներով օգտագործելու հնարավորությունից, Երևան համայնքը՝ 1.939,029 քմ ընդհանուր մակերեսով հողատարածքն ըստ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու, հանրության շահերին ծառայեցնելու, հասարակության սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղելու հնարավորությունից, ինչպես նաև հեղինակազրկվել է տեղական ինքնակառավարման մարմնի համապատասխան օղակը՝ Երևանի քաղաքապետարանը:

Այնուհետև, Տարոն Մարգարյանն իր և հիշյալ անձանց հանցավոր գործողությունների արդյունքում պետական սեփականություն հանդիսացող և դպրոցին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված 15.523 քմ մակերեսով հողատարածքից անհիմն նվազեցված, պետության գույքային ֆոնդից ապօրինի դուրս բերված և Երևանի քաղաքապետարանի գույքային ֆոնդ մտցված նշված 3.851,43 քմ ընդհանուր մակերեսով երեք առանձին հողատարածքներից 1.939,029 քմ ընդհանուր մակերեսով հողատարածքի հանցավոր ծագումը, տնօրինման եղանակը, իրական պատկանելիությունը թաքցնելու և խեղաթյուրելու միջոցով այն առանց խոչընդոտների օրինականացնելու և օրինական գործունեության շղարշի ներքո լեգիտիմացնելու իր մտադրությունն ավարտին հասցնելու նպատակով կազմակերպել է հիշյալ հողատարածքի և դրան միացված՝ հարակից, համայնքային սեփականություն հանդիսացող այլ հողատարածքների օտարումն իր և Արման Սահակյանի մերձավորներին:

Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի՝ 2014 թվականի հունիսի 11-ի թիվ 2235-Ա որոշմամբ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված ձևական աճուրդին մասնակցել են Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատակից Հարություն Մելոյանը և վերջինիս նախկին գործընկեր Խաչատուր Երանոսյանը, հաղթող է ճանաչվել Հարություն Մելոյանը: Երևանի քաղաքապետարանի և Հարություն Մելոյանի միջև 2014 թվականի հուլիսի 23-ին կնքված ձևական առուվաճառքի պայմանագրով Հ. Բեկնազարյան փողոցի 5/2 հասցեի 1.333,25 քմ մակերեսով հողատարածքը՝ 13.999.125 ՀՀ դրամով օտարվել է գործարքի իրական կողմ չհանդիսացող Հարություն Մելոյանին, ով հիշյալ գույքի ձեռքբերման պահին իմացել է նաև դրա՝ Տարոն Մարգարյանի, Արման Սահակյանի և Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից հանցավոր գործողությունների արդյունքում պետության, իսկ հետագայում նաև համայնքի գույքային ֆոնդից ապօրինի դուրս բերված լինելու մասին:

Հարություն Մելոյանը, իր հերթին, շարունակելով խեղաթյուրել և թաքցնել Տարոն Մարգարյանի, Արման Սահակյանի և Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից հանցավոր գործողությունների արդյունքում պետության, իսկ հետագայում նաև համայնքի գույքային ֆոնդից դուրս բերված և իր կողմից ձևական աճուրդի մասնակցելու և ձևական առուվաճառքի պայմանագիր կնքելու արդյունքում ձեռք բերված գույքի իրական ծագումը և պատկանելիությունը, այն առանց խոչընդոտների օրինականացնելու և օրինական գործունեության շղարշի ներքո լեգիտիմացնելու նպատակով դրանից առանձնացրել է 250 քմ մակերեսով՝ Հ. Բեկնազարյան 5/20 հասցեի հողատարածքը, որը 2014 թվականի հոկտեմբերի 23-ին 2.500.000 ՀՀ դրամով վաճառվել է Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի օգնական Արմեն Բունիաթյանին՝ այդպիսով օժանդակելով Արման Սահակյանի կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով հանցավոր ճանապարհով ստացված՝ առանձնապես խոշոր չափերով գույքի օրինականացմանը:

Արմեն Բունիաթյանը, իր հերթին, շարունակելով խեղաթյուրել և թաքցնել Տարոն Մարգարյանի, Արման Սահակյանի և Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից հանցավոր գործողությունների արդյունքում պետության, իսկ հետագայում նաև համայնքի գույքային ֆոնդից դուրս բերված և իր կողմից ձևական առուվաճառքի պայմանագրով ձեռք բերված գույքի իրական ծագումը և պատկանելիությունը, այն առանց խոչընդոտների օրինականացնելու և օրինական գործունեության շղարշի ներքո լեգիտիմացնելու նպատակով՝ 2018 թվականի մարտի 29-ին ձևական նվիրատվության պայմանագրով օտարել է իր ընկերոջը՝ Սերոբ Կարապետյանին՝ այդպիսով օժանդակելով Տարոն Մարգարյանի կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով հանցավոր ճանապարհով ստացված՝ առանձնապես խոշոր չափերով գույքի օրինականացմանը:

Սերոբ Կարապետյանը, իր հերթին, շարունակելով խեղաթյուրել և թաքցնել Տարոն Մարգարյանի, Արման Սահակյանի և Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից հանցավոր գործողությունների արդյունքում պետության, իսկ

հետագայում նաև համայնքի գույքային ֆոնդից դուրս բերված և իր կողմից ձևական նվիրատվության պայմանագրով ձեռք բերված գույքի իրական ծագումը և պատկանելիությունը, այն առանց խոչընդոտների օրինականացնելու և օրինական գործունեության շղարշի ներքո լեգիտիմացնելու նպատակով՝ 2021 թվականի հոկտեմբերի 8-ին հիշյալ անշարժ գույքը 40.000.000 ՀՀ դրամով օտարել է Վրեժ Արմոյանին՝ այդպիսով օժանդակելով Տարոն Մարգարյանի կողմից պաշտոնական դիրքն օգտագործելով հանցավոր ճանապարհով ստացված՝ առանձնապես խոշոր չափերով գույքի օրինականացմանը:

Հարություն Մելոյանը, շարունակելով խեղաթյուրել և թաքցնել, Տարոն Մարգարյանի, Արման Սահակյանի և Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից հանցավոր գործողությունների արդյունքում պետության, իսկ հետագայում նաև համայնքի գույքային ֆոնդից դուրս բերված և իր կողմից ձևական աճուրդի մասնակցելու և ձևական առուվաճառքի պայմանագիր կնքելու արդյունքում ձեռք բերված գույքի իրական ծագումը և պատկանելիությունը, այն առանց խոչընդոտների օրինականացնելու և օրինական գործունեության շղարշի ներքո լեգիտիմացնելու նպատակով դրանից առանձնացրել է 633,25 քմ մակերեսով հողատարածք և 2015 թվականի հունվարի 16-ին 10.000.000 ՀՀ դրամով ձևական առուվաճառքի պայմանագրով վաճառել է գործարքի իրական կողմ չհանդիսացող Սահակ Ռոզիկյանին՝ այդպիսով օժանդակելով Արման Սահակյանի կողմից պաշտոնական դիրքն օգտագործելով հանցավոր ճանապարհով ստացված՝ առանձնապես խոշոր չափերով գույքի օրինականացմանը:

Սահակ Ռոզիկյանի փոխարեն նշված գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումից ստացել է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ավետիս Ավագյանը:

Սահակ Ռոզիկյանը, իր հերթին, շարունակելով խեղաթյուրել և թաքցնել Արման Սահակյանի և Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից հանցավոր գործողությունների արդյունքում պետության, իսկ հետագայում նաև համայնքի գույքային ֆոնդից դուրս բերված, Հարություն Մելոյանի կողմից ձևական աճուրդի մասնակցելու և ձևական առուվաճառքի պայմանագիր կնքելու արդյունքում իրեն օտարված գույքի իրական ծագումը և պատկանելիությունը, այն առանց խոչընդոտների օրինականացնելու և օրինական գործունեության շղարշի ներքո լեգիտիմացնելու նպատակով դրանից առանձնացրել է Հ. Բեկնազարյան փողոցի 5/22 հասցեի 250 քմ մակերեսով հողատարածքը և 2015 թվականի հունիսի 4-ին 2.750.000 ՀՀ դրամով ի վերջո վաճառել է Արման Սահակյանի եղբորը՝ Տիգրան Սահակյանին՝ այդպիսով օժանդակելով Արման Սահակյանի կողմից պաշտոնական դիրքն օգտագործելով հանցավոր ճանապարհով ստացված՝ առանձնապես խոշոր չափերով գույքի օրինականացմանը:

Տիգրան Սահակյանի փոխարեն ևս սեփականության իրավունքի գրանցման վկայականը ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումից ստացել է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ավետիս Ավագյանը:

Այնուհետև, «Թիվ 185 հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ից առանձնացված՝ 145,478 քմ մակերեսով մյուս հողամասը, որը ներառվել է Հ. Բեկնազարյան փողոցի 5/17 հասցեի 1.138,76 քմ մակերեսով հողամասում, Երևանի քաղաքապետի՝ 2014 թվականի հունիսի 11-ի թիվ 2235-Ա որոշմամբ ներկայացվել է ձևական աճուրդի, որին մասնակցել են Արման Սահակյանի օգնական Լևոն Հարությունյանը և վարորդ Արթուր Հովակիմյանը, իսկ աճուրդին հաղթող է ճանաչվել Լևոն Հարությունյանը: 2014 թվականի հուլիսի 23-ին Երևանի քաղաքապետարանի և Լևոն Հարությունյանի միջև կնքված ձևական առուվաճառքի պայմանագրով՝ 7.174.188 ՀՀ դրամով նշված հողատարածքն օտարվել է նկարագրված գործարքի իրական կողմ չհանդիսացող Լևոն Հարությունյանին, ով հիշյալ գույքի ձեռքբերման պահին իմացել է նաև դրա՝ Արման Սահակյանի և Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից հանցավոր գործողությունների արդյունքում պետության, իսկ հետագայում նաև համայնքի գույքային ֆոնդից ապօրինի դուրս բերված լինելու մասին:

Լևոն Հարությունյանը, իր հերթին, շարունակելով խեղաթյուրել և թաքցնել Արման Սահակյանի և Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից հանցավոր գործողությունների արդյունքում պետության, իսկ հետագայում նաև համայնքի գույքային ֆոնդից դուրս բերված և իր կողմից ձևական աճուրդի մասնակցելու ու ձևական առուվաճառքի պայմանագիր կնքելու արդյունքում ձեռք բերված գույքի իրական ծագումը և պատկանելիությունը, այն առանց խոչընդոտների օրինականացնելու և օրինական գործունեության շղարշի ներքո լեգիտիմացնելու նպատակով 2015 թվականի մարտի 20-ին օտարել է Էդգար Մկրտչյանին: Ընդ որում, հանցավոր ճանապարհով ստացված անշարժ գույքի վաճառքից առաջացած գումարի իրական չափը թաքցնելու, գույքի օտարումից առաջացած իրական եկամուտները չարտացոլելու նպատակով անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրում խեղաթյուրվել է վաճառքի արժեքը և որպես վաճառված գույքի արժեք՝ նշվել է 15.000.000 ՀՀ դրամը, սակայն գործարքի դիմաց փոխադարձ պայմանավորվածության համաձայն՝ փաստացի վճարվել է 34.905.000 ՀՀ դրամ, որը Լևոն Հարությունյանն առուվաճառքի պայմանագրի կնքումից 10 օր անց՝ 2015 թվականի ապրիլի 1-ին, փոխանցել է Արման Սահակյանի՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի հաշվին՝ այն ուղղելով վերջինիս ունեցած վարկային պարտավորությունների մարմանը՝ այդպիսով օժանդակելով Արման Սահակյանի կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով հանցավոր ճանապարհով ստացված՝ առանձնապես խոշոր չափերով գույքի օրինականացմանը:

Այնուհետև, «Թիվ 185 հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ից առանձնացված՝ 642,087 քմ մակերեսով մյուս հողամասը, որը ներառվել է Հ. Բեկնազարյան փողոցի 5/18 հասցեի 1.092,85 քմ մակերեսով հողամասում, Երևանի քաղաքապետի՝ 2014 թվականի հունիսի 11-ի թիվ 2235-Ա որոշմամբ ներկայացվել է ձևական աճուրդի, որին մասնակցել

են Արման Սահակյանի մտերիմ՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավար Արտավազդ Սարգսյանի մորաքրոջ որդին՝ Արմեն Սարգսյանը և վերջինիս ընկեր Կարեն Ունուսյանը, իսկ հաղթող ճանաչվել է Կարեն Ունուսյանը: 2014 թվականի հուլիսի 23-ին Երևանի քաղաքապետարանի և Կարեն Ունուսյանի միջև կնքված ձևական առուվաճառքի պայմանագրով նշված հողատարածքը 6.884.955 ՀՀ դրամով օտարվել է գործարքի իրական կողմ չհանդիսացող Կարեն Ունուսյանին, ով հիշյալ գույքի ձեռք բերման պահին իմացել է նաև դրա՝ Արման Սահակյանի, Արտավազդ Սարգսյանի և Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից հանցավոր գործողությունների արդյունքում պետության, իսկ հետագայում նաև համայնքի գույքային ֆոնդից ապօրինի դուրս բերված լինելու մասին: Կարեն Ունուսյանի փոխարեն սեփականության իրավունքի գրանցման վկայականը ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումից ստացել է Արմեն Սարգսյանը:

Արմեն Սարգսյանը և Կարեն Ունուսյանը, իրենց հերթին, շարունակելով խեղաթյուրել և թաքցնել Արման Սահակյանի, Արտավազդ Սարգսյանի և Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից հանցավոր, Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավար Արտավազդ Սարգսյանի ապօրինի գործողությունների արդյունքում պետության, իսկ հետագայում նաև համայնքի գույքային ֆոնդից դուրս բերված և նրանց կողմից ձևական աճուրդի մասնակցելու և Կարեն Ունուսյանի կողմից ձևական առուվաճառքի պայմանագիր կնքելու արդյունքում ձեռք բերված գույքի իրական ծագումը և պատկանելիությունը, այն առանց խոչընդոտների օրինականացնելու և օրինական գործունեության շղարշի ներքո լեգիտիմացնելու նպատակով 2014 թվականի հոկտեմբերի 7-ին 5.000.000 ՀՀ դրամով օտարել են Հրայր Ավագյանին՝ այդպիսով օժանդակելով Արման Սահակյանի կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով հանցավոր ճանապարհով ստացված՝ առանձնապես խոշոր չափերով գույքի օրինականացմանը:

Վերը նկարագրված գործողությունների և քաղաքացիաիրավական ձևական գործարքների արդյունքում Արտավազդ Սարգսյանը, նպատակ ունենալով Արմեն Սարգսյանի և Կարեն Ունուսյանի միջոցով թաքցնել և խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը և իրական պատկանելիությունը, ինչպես նաև խուսափել կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, հանցավոր ճանապարհով ստացված անշարժ գույքն առանց խոչընդոտների օրինականացնելու և օրինական գործունեության շղարշի ներքո լեգիտիմացնելու նպատակով վաճառքի միջոցով այն փոխարկել է դրամի՝ թաքցնելով և խեղաթյուրելով նաև գույքի իրական բնույթը՝ այդպիսով օժանդակելով Արման Սահակյանի կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով հանցավոր ճանապարհով ստացված՝ առանձնապես խոշոր չափերով գույքի օրինականացմանը:

Արդյունքում, Տարոն Մարգարյանն այլ անձանց օժանդակությամբ, պաշտոնեական դիրքն օգտագործելով, նպատակ ունենալով թաքցնել և խեղաթյուրել հանցավոր ճանապարհով ստացված՝ վերը նշված առանձնապես խոշոր չափերով անշարժ գույքի հանցավոր ծագումը և իրական պատկանելիությունը, դրանք ձևակերպել

է իր հետ փոխկապակցված անձանց անուններով, ինչից հետո հիշյալ գույքի ձեռքբերումն օրինական գործունեության շրջանակի ներքո լեգիտիմացնելու նպատակով դրա նկատմամբ ձևականորեն ձեռք բերված սեփականության իրավունքի մաս կազմող՝ տնօրինման իրավազորության իրականացման միջոցով այն առանց խոչընդոտների դրել է օրինական շրջանառության մեջ և դրան հաղորդել օրինական տեսք:

Բացի այդ, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, նպատակ ունենալով Երևան քաղաքի Աճառյան փողոցի 40 հասցեում գտնվող «Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից զբաղեցրած 13.172 քմ մակերեսով հողատարածքից իր մերձավորների համար հանցավոր ճանապարհով ձեռք բերել և օրինականացնել հողատարածքներ, Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց հետ նախապես պայմանավորվել է նշված գույքն ապօրինի առանձնացնելու եղանակով դուրս բերել համայնքի գույքային ֆոնդից և մտցնել Երևանի քաղաքապետարանի գույքային ֆոնդ, այնուհետև ակնհայտ հանցավոր ճանապարհով այն դուրս բերել Երևանի քաղաքապետարանի գույքային ֆոնդից և ձևականորեն մտցնել այլ անձանց գույքային ֆոնդ, ինչից հետո հիշյալ գույքի ձեռքբերումն օրինական գործունեության շրջանակի ներքո լեգիտիմացնելու նպատակով՝ դրա նկատմամբ ձևականորեն ձեռք բերված սեփականության իրավունքի մաս կազմող՝ տնօրինման իրավազորության իրականացման միջոցով այն օտարել իր մերձավորներին՝ այդպիսով առանց խոչընդոտների օրինականացնելով հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը:

Նշված հանցավոր մտադրության իրականացման նպատակով Տարոն Մարգարյանը 2011 թվականի սեպտեմբերի 13-ից մինչև սեպտեմբերի 19-ն ընկած ժամանակահատվածում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանին հանձնարարել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Անդրանիկ Քասարյանին վերադարձնել Երևան քաղաքի Աճառյան փողոցի 40 հասցեում գտնվող «Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ին ամրակցված անշարժ գույքը ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը հանձնելու հանձնման-ընդունման գործընթացի շրջանակներում դպրոցին հատկացված հողային տարածքի ճշգրիտ սահմանների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին փաստաթղթերը, այդ թվում՝ Երևանի քաղաքապետի 2002 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 2448-Ա որոշման հիման վրա թողարկված հողամասի 2365-2002 գլխավոր հատակագիծը, համաձայն որի՝ հողամասի մակերեսը կազմել է 13.172 քմ:

Արսեն Ամյանը 2011 թվականի սեպտեմբերի 19-ին Անդրանիկ Քասարյանին հասցեագրված թիվ 20/1-3300 գրությամբ հայտնել է, որ. «Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Տ. Մարգարյանի հանձնարարությամբ հետ է վերադարձվում Աճառյան փողոցի 40 հասցեում գտնվող թիվ 16 հատուկ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությանն առնչվող փաստաթղթերի փաթեթը, հարցը կրկին ուսումնասիրելու և քաղաքաշինական մասնագիտական եզրակացություն տրամադրելու նպատակով»:

Այնուհետև, Տարոն Մարգարյանի հանձնարարությամբ Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձինք՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Անդրանիկ Քասարյանը և Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի գեոդեզիական բաժնի պետ Տարոն Գրիգորյանը, անձնական այլ շահագրգռվածությունից և խմբային շահերից ելնելով, ձեռք բերված հանցավոր պայմանավորվածության համաձայն, իրենց պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով՝ հանձնարարել են Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի գեոդեզիստ Միքայել Հակոբյանին և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության ճարտարապետ Հայկ Կյուրեղյանին կատարել «Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից զբաղեցրած հողամասի սահմանների ճշտում և դրա արդյունքում կազմված նոր սահմանների հատակագծում դպրոցի տարածքում չներառել և դուրս թողնել 3.693,12 քմ. մակերեսով դպրոցին պատկանող հողակտորը:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության ճարտարապետ Հայկ Կյուրեղյանը վարչության պետ Անդրանիկ Քասարյանի հանձնարարությամբ և ցուցումով՝ առանց տարածքի տեղազննում իրականացնելու, Անդրանիկ Քասարյանի կողմից նշված ուրվագծով կազմել և վերջինիս է ներկայացրել ձևակերպման ենթակա սահմաններով հողամասի սխեմաները և եզրակացությունը, համաձայն որի՝ տարածքի տեղազննումից և տեղագրական հանույթի կրկնակի ճշգրտումից պարզվել է, որ վերոհիշյալ հասցեում գտնվող դպրոցի հողամասի մակերեսը կազմում է 9.478,88 քմ՝ նախկին գլխավոր հատակագծով սահմանված 13.172 քմ փոխարեն:

Անդրանիկ Քասարյանը 2011 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 18-06/2-49395 կեղծ գրություն-եզրակացությամբ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանին է փոխանցել կազմված սխեմաները, ով խմբային շահերից և անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով՝ իր պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ և կազմել է Երևանի քաղաքապետի որոշման նախագիծ, որում, հիմք ընդունելով վերը նշված եզրակացությունը, սահմանել է, որ Աճառյան փողոցի 40 հասցեում գտնվող դպրոցի հողամասի մակերեսը կազմում է 9.478,88 քմ:

2011 թվականի նոյեմբերի 15-ից արդեն Երևանի քաղաքապետ ընտրված Տարոն Մարգարյանի հանձնարարությամբ՝ 2011 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 7305-Ա որոշմամբ, թողարկվել է նոր հատակագիծ, որով Երևան քաղաքի Աճառյան փողոցի 40 հասցեում գտնվող՝ «Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի 13.172 քմ մակերես ունեցող հողամասն արհեստականորեն նվազեցվել է 3.693,12 քմ մակերեսով: Քաղաքապետի նշված որոշումը և նոր հատակագիծը ներկայացվել են ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում կատարելու և սեփականության իրավունքի գրանցման վկայական տրամադրելու համար:

Այնուհետև, Տարոն Մարգարյանը դպրոցի հողամասի սահմաններից դուրս թողնված 3.693,12 քմ մակերեսով հողատարածքից 3.569,8 քմ մակերեսով, Մ. Բաբաջանյան փողոցի 8/2 հասցեում գտնվող հողամասը 2012 թվականի հուլիսի 13-ի թիվ 5198-Ա որոշմամբ ներկայացրել է աճուրդի: Տեղի ունեցած ձևական աճուրդի արդյունքում, որին մասնակցել են Տարոն Մարգարյանի սանիկ Արա Ճորուխյանի ընկեր, Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ Արտակ Մակարյանը և Կարեն Ռոստոմյանը, Մ. Բաբաջանյան փողոցի 8/2 հասցեում գտնվող, 3.569,8 քմ մակերեսով հողամասը 22.659.900 ՀՀ դրամով օտարվել է գործարքի իրական կողմ չհանդիսացող Կարեն Ռոստոմյանին, ով հիշյալ գույքի ձեռքբերման պահին իմացել է նաև դրա՝ Տարոն Մարգարյանի և Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից հանցավոր գործողությունների արդյունքում պետության, իսկ հետագայում նաև համայնքի գույքային ֆոնդից ապօրինի դուրս բերված լինելու մասին:

Կարեն Ռոստոմյանը, իր հերթին, նպատակ ունենալով խեղաթյուրել և թաքցնել Տարոն Մարգարյանի և Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից հանցավոր գործողությունների արդյունքում պետության, իսկ հետագայում նաև համայնքի գույքային ֆոնդից դուրս բերված և իր կողմից ձևական աճուրդի մասնակցելու և ձևական առուվաճառքի պայմանագիր կնքելու արդյունքում ձեռք բերված գույքի իրական ծագումը և պատկանելիությունը, առանց խոչընդոտների օրինականացնել և օրինական գործունեության շղարշի ներքո լեգիտիմացնել առանձնապես խոշոր չափերով անշարժ գույքը և այդպիսով օժանդակել Տարոն Մարգարյանի, Կարինե Նորեկյանի և Արա Ճորուխյանի կողմից հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գույքի օրինականացմանը, ընդամենը 20 օր անց այն բաժանել է երկու հավասար մասերի, որոնցից մեկը՝ Երևան քաղաքի Բաբաջանյան փողոց 8/2 հասցեում գտնվող 1.798,4քմ. մակերեսով հողամասը ձևական առուվաճառքի պայմանագրով, 4.000.000 ՀՀ դրամով օտարել է «Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Կարինե Նորեկյանի ընտանիքին, մասնավորապես՝ վերջինիս ամուսնուն՝ Լյուդվիգ Ասատրյանին, իսկ մյուսը՝ Երևան քաղաքի Մ. Բաբաջանյան փողոցի 8/3 հասցեում գտնվող 1.798 քմ մակերեսով հողատարածքը, Կարեն Ռոստոմյանը ձևական առուվաճառքի պայմանագրով, 4.000.000 ՀՀ դրամով օտարել է Տարոն Մարգարյանի սանիկ Արա Ճորուխյանին, ովքեր հիշյալ գույքերի ձեռքբերման պահին իմացել են նաև դրա՝ Տարոն Մարգարյանի և Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից հանցավոր գործողությունների արդյունքում պետության, իսկ հետագայում նաև համայնքի գույքային ֆոնդից ապօրինի դուրս բերված լինելու մասին:

Արդյունքում, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, նպատակ ունենալով պաշտոնեական դիրքն օգտագործելով թաքցնել և խեղաթյուրել հանցավոր ճանապարհով ստացված՝ վերը նշված առանձնապես խոշոր չափերով անշարժ գույքի հանցավոր ծագումը և իրական պատկանելիությունը, դրանք ձևականորեն ձևակերպել է Կարեն Ռոստոմյանի անվամբ, ինչից հետո հիշյալ գույքի ձեռքբերումն օրինական

գործունեության շղարշի ներքո լեգիտիմացնելու նպատակով՝ դրա նկատմամբ ձևականորեն ձեռք բերված սեփականության իրավունքի մաս կազմող՝ տնօրինման իրավազորության իրականացման միջոցով այն օտարվել է Տարոն Մարգարյանի հետ փոխկապակցված անձանց՝ Կարինե Նորեկյանի ամուսնուն՝ Լյուդվիգ Ասատրյանին, ինչպես նաև Արա Ճորուխյանին՝ այդպիսով առանց խոչընդոտների դրան հաղորդելով օրինական տեսք և դրել օրինական շրջանառության մեջ:

Բացի այդ, Տարոն Մարգարյանը, նպատակ ունենալով պաշտոնեական դիրքն օգտագործելով «Երևանի թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի զբաղեցրած՝ 6.452,9 քմ մակերեսով, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից իր մերձավոր Սասունիկ Իսրայելյանի համար հանցավոր ճանապարհով ձեռք բերել և օրինականացնել 575 քմ մակերեսով հողատարածք, Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց հետ նախապես պայմանավորվել է նշված գույքն ապօրինի առանձնացնելու եղանակով դուրս բերել Երևանի քաղաքապետարանի գույքային ֆոնդից և մտցնել Սասունիկ Իսրայելյանի գույքային ֆոնդ, ինչից հետո այն միացվել է Սասունիկ Իսրայելյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Տիտոգրադյան փողոցի 17 հասցեում գտնվող, 0.042909 հա մակերեսով հողամասին, որի արդյունքում 575 քմ մակերեսով հողատարածքը Տիտոգրադյան փողոցի 17 հասցեում գտնվող՝ արդեն միախառնված, 0.100409 հա մակերեսով հողամասի կազմում դրվել է օրինական շրջանառության մեջ և դրան հաղորդվել է օրինական տեսք:

Նշված հանցավոր մտադրության իրականացման նպատակով Արմինե Իսրաելյանը, շահադիտական դրդումներով և անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ և Երևանի քաղաքապետարանի համապատասխան պաշտոնատար անձանց հետ ձեռք բերված հանցավոր համաձայնությանը համապատասխան՝ դիմում է ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Արմեն Հարությունյանին՝ «Երևանի թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի զբաղեցրած հողատարածքի սահմանների ճշտում կատարելու վերաբերյալ, որի հիման վրա վարչական շրջանի ղեկավար Արմեն Հարությունյանը 2012 թվականի սեպտեմբերի 4-ին գրություն է հասցեագրել Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին՝ խնդրելով հանձնարարել համապատասխան աշխատակիցներին՝ իրականացնել հիշյալ կազմակերպության զբաղեցրած տարածքի սահմանների ճշտում:

Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի հանձնարարությամբ քաղաքապետարանի պաշտոնատար անձինք՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Անդրանիկ Քասարյանը և Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՓԲԸ գեոդեզիական բաժնի պետ Տարոն Գրիգորյանը, անձնական այլ շահագրգռվածությունից և խմբային շահերից ելնելով, իրենց պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, հանձնարարել են Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի գեոդեզիստ Արամ Ենգոյանին և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և

քաղաքաշինության վարչության ճարտարապետ Էդուարդ Վարդանյանին՝ կատարել «Երևանի թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի զբաղեցրած հողամասի սահմանների ճշտում և դրա արդյունքում կազմված հողամասի նոր հատակագծում ուսումնական հաստատության տարածքում չներառել և դուրս թողնել 580,63 քմ մակերեսով հողակտորը: Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի գեոդեզիստ Արամ Ենգոյանի կողմից իրականացված գեոդեզիայի արդյունքում պարզվել է, որ ուսումնական հաստատության հողատարածքի փաստացի մակերեսը կազմում է 6.452,9 քմ, սակայն Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության ճարտարապետ Էդուարդ Վարդանյանը և «Քաղաքաշինություն» ՓԲԸ գեոդեզիական բաժնի պետ Տարոն Գրիգորյանը հայտնել են, որ վերադաս ղեկավարության հանձնարարությամբ կատարվել է ուսումնական հաստատության հողամասի սահմանների փոփոխություն և անհրաժեշտ է ստորագրել հողամասի նոր հատակագիծը, համաձայն որի՝ ուսումնական հաստատության հողամասի մակերեսը նվազեցվել է 580,63 քմ-ով: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության ճարտարապետ Էդուարդ Վարդանյանը, առանց օբյեկտիվ հիմնավորումների և պատճառաբանվածության, կազմել և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Անդրանիկ Քասարյանին է ներկայացրել ձևակերպման ենթակա սահմաններով նշագրված տարածքի սխեմաները և անհիմն եզրակացությունը, համաձայն որի՝ ուսումնական հաստատության զբաղեցրած հողամասի փաստացի մակերեսը կազմում է 5.872,27քմ՝ սեփականության իրավունքի գրանցման վկայականում ամրագրված 6.452,9 քմ-ի փոխարեն:

Անդրանիկ Քասարյանը, գործելով ձեռք բերված հանցավոր պայմանավորվածության շրջանակներում, անձնական այլ շահագրգռվածությունից և խմբային շահերից ելնելով, պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, 2012 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 18-06/2-43363 կեղծ գրություն-եզրակացությամբ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանին է փոխանցել ձևակերպման ենթակա սահմաններով նշագրված տարածքի սխեմաները: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը, իր հերթին, անձնական այլ շահագրգռվածությունից և խմբային շահերից ելնելով, պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ և կազմել է Երևանի քաղաքապետի որոշման նախագիծ, որում, հիմք ընդունելով վերը նշված եզրակացությունը, սահմանել է, որ Ավանեսովի փողոցի թիվ 12 հասցեում գտնվող՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող «Երևանի թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի զբաղեցրած հողամասի մակերեսը կազմում է 5.872,27 քմ: Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի հանձնարարությամբ՝ 2012 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 6760-Ա որոշմամբ, թողարկվել է նոր հատակագիծ, որով սահմանվել է, որ Ավանեսովի փողոցի թիվ 12 հասցեում գտնվող՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, «Երևանի թիվ 64 նախադպրոցական ուսումնական

հաստատություն» ՀՈԱԿ-ի զբաղեցրած հողամասի մակերեսը կազմում է 5.872,27 քմ՝ այդպիսով հողամասի մակերեսն արհեստականորեն նվազեցնելով 580,63 քմ-ով: Երևանի քաղաքապետի նշված որոշումը և նոր հատակագիծը ներկայացվել են ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում կատարելու և սեփականության իրավունքի գրանցման վկայական տրամադրելու համար:

Այնուհետև, ուսումնական հաստատության հողամասի սահմաններից դուրս թողնված 580,63 քմ մակերեսով հողատարածքից 575 քմ մակերեսով, Տիտոգրադյան 17/1 հասցեում գտնվող հողամասը Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի՝ 2013 թվականի հունվարի 15-ի թիվ 69-Ա որոշման հիման վրա ներկայացվել է ձևական աճուրդի, որին մասնակցել են Արմինե Իսրայելյանի հայրը՝ Սասունիկ Իսրայելյանը, ինչպես նաև վերջինիս սանիկ Վիգեն Մելյանը, իսկ հաղթող է ճանաչվել Սասունիկ Իսրայելյանը: Երևանի քաղաքապետարանի և Սասունիկ Իսրայելյանի միջև 2013 թվականի փետրվարի 27-ին կնքված առուվաճառքի պայմանագրով Տիտոգրադյան փողոցի 17/1 հասցեի 575 քմ մակերեսով հողատարածքը՝ 5.433.800 ՀՀ դրամով օտարվել է Արմինե Իսրայելյանի հորը՝ Սասունիկ Իսրայելյանին, ով հիշյալ գույքի ձեռքբերման պահին իմացել է նաև դրա՝ Տարոն Մարգարյանի, Արմինե Իսրայելյանի և Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից հանցավոր գործողությունների արդյունքում համայնքի գույքային ֆոնդից ապօրինի դուրս բերված լինելու մասին:

Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի, Երևանի քաղաքապետարանի համապատասխան պաշտոնատար անձանց և Երևան քաղաքի Ավանեսովի փողոցի թիվ 12 հասցեում գտնվող «Երևանի թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմինե Իսրաելյանի վերը նկարագրված գործողությունների արդյունքում էական վնաս է պատճառվել անձանց, կազմակերպության և համայնքի իրավունքներին և օրինական շահերին, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, այն է՝ «Երևանի թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը զրկվել է 863,34 քմ մակերեսով հողատարածքն ուսումնական նպատակով օգտագործելու և տիրապետելու հնարավորությունից, հեղինակազրկվել է համայնքը՝ ի դեմս Երևանի քաղաքապետարանի, համայնքի գույքային ֆոնդից դուրս է բերվել 863,34 քմ մակերեսով հողատարածքը, ինչի արդյունքում համայնքը զրկվել է նաև այն տնօրինելու, հանրության շահերին ծառայեցնելու, հասարակության սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղելու հնարավորությունից:

Այնուհետև, Տարոն Մարգարյանն իր, Արմինե Իսրաելյանի և Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց հանցավոր գործողությունների արդյունքում Երևանի քաղաքապետարանի գույքային ֆոնդից դուրս բերված՝ Երևան քաղաքի Տիտոգրադյան փողոցի 17/1 հասցեի 575 քմ մակերեսով հողատարածքի իրական ծագումը և պատկանելիությունը խեղաթյուրելու և թաքցնելու, առանց խոչընդոտների օրինականացնելու և օրինական գործունեության շղարշի ներքո լեգիտիմացնելու նպատակով 2013 թվականի մարտի 21-ի N 1177-Ա որոշմամբ այն միացրել է Սասունիկ Իսրայելյանին սեփականության իրավունքով պատկանող՝

Տիտոգրադյան փողոցի 17 հասցեում գտնվող, 0.042909 հա մակերեսով հողամասին, ինչի արդյունքում 575 քմ մակերեսով հողատարածքը Տիտոգրադյան փողոցի 17 հասցեում գտնվող՝ արդեն միախառնված, 0.100409 հա մակերեսով հողամասի կազմում դրվել է օրինական շրջանառության մեջ և դրան հաղորդվել է օրինական տեսք:

Բացի այդ, Տարոն Մարգարյանը, նպատակ ունենալով պաշտոնական դիրքն օգտագործելով «Երևանի թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի զբաղեցրած՝ 6.452,9 քմ մակերեսով, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից իր մերձավոր Սասունիկ Իսրայելյանի համար հանցավոր ճանապարհով ձեռք բերել և օրինականացնել 863,34 քմ մակերեսով հողատարածք, Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց հետ նախապես պայմանավորվել է նշված գույքն ապօրինի առանձնացնելու եղանակով դուրս բերել Երևանի քաղաքապետարանի գույքային ֆոնդից և մտցնել Սասունիկ Իսրայելյանի գույքային ֆոնդ, ինչից հետո այն միացվել է Սասունիկ Իսրայելյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Տիտոգրադյան փողոցի 17 հասցեում գտնվող, 0.100409 հա մակերեսով հողամասին, որի արդյունքում 863,34 քմ մակերեսով հողատարածքը Տիտոգրադյան փողոցի 17 հասցեում գտնվող՝ արդեն միախառնված, 0.186743 հա մակերեսով հողամասի կազմում դրվել է օրինական շրջանառության մեջ և դրան հաղորդվել է օրինական տեսք:

Նշված հանցավոր մտադրության իրականացման նպատակով Արմինե Իսրաելյանը, շահադիտական դրդումներով և անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, պաշտոնական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ և Երևանի քաղաքապետարանի համապատասխան պաշտոնատար անձանց հետ ձեռք բերված հանցավոր համաձայնությանը համապատասխան՝ դիմում է ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Արմեն Հարությունյանին՝ «Երևանի թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի զբաղեցրած հողատարածքի սահմանների ճշտում կատարելու վերաբերյալ, որի հիման վրա վարչական շրջանի ղեկավար Արմեն Հարությունյանը 2014 թվականի մայիսի 5-ին գրություն է հասցեագրել Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին՝ խնդրելով կարիքն առաջանալու կապակցությամբ հանձնարարել համապատասխան աշխատակիցներին՝ իրականացնել հիշյալ կազմակերպության զբաղեցրած տարածքի սահմանների ճշտում:

Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի հանձնարարությամբ քաղաքապետարանի պաշտոնատար անձինք՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Անդրանիկ Քասարյանը և Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՓԲԸ գեոդեզիական բաժնի պետ Տարոն Գրիգորյանը, անձնական այլ շահագրգռվածությունից և խմբային շահերից ելնելով, իրենց պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, հանձնարարել են Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի գեոդեզիստ Տիգրան Փոթիկյանին և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և

քաղաքաշինության վարչության ճարտարապետ Էդուարդ Վարդանյանին՝ կատարել «Երևանի թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի զբաղեցրած հողամասի սահմանների ճշտում և դրա արդյունքում կազմված հողամասի նոր հատակագծում ուսումնական հաստատության տարածքում չներառել և դուրս թողնել 863,34 քմ մակերեսով հողակտորը: Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի գեոդեզիստ Տիգրան Փոթիկյանն առանց տեղում չափագրում կատարելու «Քաղաքաշինություն» ՓԲԸ գեոդեզիական բաժնի պետ՝ Տարոն Գրիգորյանի և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության ճարտարապետ Էդուարդ Վարդանյանի պահանջով ստորագրել է առանց օբյեկտիվ հիմնավորումների և պատճառաբանվածության կազմված հողամասի նոր հատակագծում, իսկ ճարտարապետ Էդուարդ Վարդանյանը, գործելով վերադասի հանձնարարությամբ, առանց օբյեկտիվ հիմնավորումների և պատճառաբանվածության կազմել և Անդրանիկ Քասարյանին է ներկայացրել ձևակերպման ենթակա սահմաններով նշագրված տարածքի սխեմաները և եզրակացությունը, համաձայն որի՝ ուսումնական հաստատության հողամասի մակերեսը կազմել է 5008,93 քմ՝ սեփականության իրավունքի գրանցման վկայականում ամրագրված 5.872,27 քմ-ի փոխարեն:

Անդրանիկ Քասարյանը, գործելով ձեռք բերված հանցավոր պայմանավորվածության շրջանակներում, անձնական այլ շահագրգռվածությունից և խմբային շահերից ելնելով, պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, 2014 թվականի մայիսի 22-ի թիվ 18-06/2-29253 կեղծ գրություն-եզրակացությամբ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանին է փոխանցել ձևակերպման ենթակա սահմաններով նշագրված տարածքի սխեմաները: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը, իր հերթին, անձնական այլ շահագրգռվածությունից և խմբային շահերից ելնելով, պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ և կազմել է Երևանի քաղաքապետի որոշման նախագիծ, որում, հիմք ընդունելով վերը նշված եզրակացությունը, սահմանել է, որ Ավանեսովի փողոցի թիվ 12 հասցեում գտնվող՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող «Երևանի թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի զբաղեցրած հողամասի մակերեսը կազմում է 5008,93 քմ: Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի հանձնարարությամբ՝ 2014 թվականի հունիսի 9-ի թիվ 2189-Ա որոշմամբ, թողարկվել է նոր հատակագիծ, որով սահմանվել է, որ Ավանեսովի փողոցի թիվ 12 հասցեում գտնվող՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, «Երևանի թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի զբաղեցրած հողամասի մակերեսը կազմում է 5008,93 քմ՝ այդպիսով հողամասի մակերեսն արհեստականորեն նվազեցնելով 863,34 քմ-ով: Երևանի քաղաքապետի նշված որոշումը և նոր հատակագիծը ներկայացվել են ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում կատարելու և սեփականության իրավունքի գրանցման վկայական տրամադրելու համար:

Այնուհետև, ուսումնական հաստատության հողամասի սահմաններից դուրս թողնված 863,34 քմ մակերեսով, Տիտոգրադյան 17/3 հասցեում գտնվող հողամասը Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 3885-Ա որոշման հիման վրա ներկայացվել է ձևական աճուրդի, որին մասնակցել են Արմինե Իսրաելյանի հայրը՝ Սասունիկ Իսրայելյանը, ինչպես նաև Արամ Սաղաթելյանը, իսկ հաղթող է ճանաչվել Սասունիկ Իսրայելյանը: Երևանի քաղաքապետարանի և Սասունիկ Իսրայելյանի միջև 2014 թվականի նոյեմբերի 25-ին կնքված առուվաճառքի պայմանագրով Տիտոգրադյան 17/3 հասցեի 863,34 քմ մակերեսով հողատարածքը՝ 8.442.063 ՀՀ դրամով օտարվել է Արմինե Իսրաելյանի հորը՝ Սասունիկ Իսրայելյանին, ով հիշյալ գույքի ձեռքբերման պահին իմացել է նաև դրա՝ Տարոն Մարգարյանի, Արմինե Իսրաելյանի և Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից հանցավոր գործողությունների արդյունքում համայնքի գույքային ֆոնդից ապօրինի դուրս բերված լինելու մասին:

Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի, Երևանի քաղաքապետարանի համապատասխան պաշտոնատար անձանց և Երևան քաղաքի Ավանեսովի փողոցի թիվ 12 հասցեում գտնվող «Երևանի թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմինե Իսրաելյանի վերը նկարագրված գործողությունների արդյունքում էական վնաս է պատճառվել անձանց, կազմակերպության և համայնքի իրավունքներին և օրինական շահերին, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, այն է՝ «Երևանի թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը զրկվել է 863,34 քմ մակերեսով հողատարածքն ուսումնական նպատակով օգտագործելու և տիրապետելու հնարավորությունից, հեղինակազրկվել է համայնքը՝ ի դեմս Երևանի քաղաքապետարանի, համայնքի գույքային ֆոնդից դուրս է բերվել 863,34 քմ մակերեսով հողատարածքը, ինչի արդյունքում համայնքը զրկվել է նաև այն տնօրինելու, հանրության շահերին ծառայեցնելու, հասարակության սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղելու հնարավորությունից:

Այնուհետև, Տարոն Մարգարյանն իր, Արմինե Իսրաելյանի և Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց հանցավոր գործողությունների արդյունքում Երևանի քաղաքապետարանի գույքային ֆոնդից դուրս բերված՝ Երևան քաղաքի Տիտոգրադյան փողոցի 17/3 հասցեի 863,34 քմ մակերեսով հողատարածքի իրական ծագումը և պատկանելիությունը խեղաթյուրելու և թաքցնելու, առանց խոչընդոտների օրինականացնելու և օրինական գործունեության շղարշի ներքո լեգիտիմացնելու նպատակով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ 495-Ա որոշմամբ այն միացրել է Սասունիկ Իսրայելյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Տիտոգրադյան փողոցի 17 հասցեում գտնվող, 0.100409 հա մակերեսով հողամասին, ինչի արդյունքում 863,34 քմ մակերեսով հողատարածքը Տիտոգրադյան փողոցի 17 հասցեում գտնվող՝ արդեն միախառնված, 0.186743 հա մակերեսով հողամասի կազմում դրվել է օրինական շրջանառության մեջ և դրան հաղորդվել է օրինական տեսք:

2025 թվականի մարտի 11-ին թիվ 58217318 քրեական վարույթով հսկող դատախազ, ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ Լիլիթ Շիրվանյանն առաջարկություն է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահին «ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Տարոն Անդրանիկի Մարգարյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին» միջնորդագիր ներկայացնելու վերաբերյալ:

Քրեական վարույթի ուսումնասիրությամբ պարզվել է, որ կատարված քննությամբ ձեռք են բերվել բավարար փաստական տվյալներ, որոնք հիմք են տալիս ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Տարոն Անդրանիկի Մարգարյանի նկատմամբ հարուցել հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով՝ 4 դրվագ (համապատասխանում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերին), ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով (համապատասխանում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասին) և 447-րդ հոդվածի 1-ին մասով (համապատասխանում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 315^2-րդ հոդվածին):

Այսպես.

ՀՀ Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Պատգամավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Պատգամավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը»:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին միջնորդագիրը գլխավոր դատախազը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին: Ազգային ժողովի նախագահն այդ մասին անմիջապես տեղեկացնում է միջնորդագրում նշված պատգամավորին, իսկ դրա անհնարինության դեպքում հանդես է գալիս հայտարարությամբ: Միջնորդագրին կցվում է պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը:

(...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, տեղաբաշխումը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ պահելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում)՝

(...)

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

(...)

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

3) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

«1. Պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն ի վնաս պետական կամ ծառայողական շահերի օգտագործելը կամ իր ծառայողական պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ այնպիսի արարք կատարելը, որը չի բխում իր լիազորություններից կամ դուրս է իր լիազորությունների շրջանակից, որն էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին՝

(...)

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

(...)

2) պատճառել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս,

(...)

4) կատարվել է մի խումբ պաշտոնատար անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

5) անզգուշությամբ առաջացրել է այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Պաշտոնատար անձի կողմից, որի վրա օրենսդրությամբ դրված է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, շենքերի կամ շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու պարտականություն,

հողամասի ինքնակամ զավթումը կամ շենքի կամ շինության ինքնակամ կառուցումը կասեցնելու միջոց չձեռնարկելը, ինչպես նաև հողամասն ինքնակամ զավթած, ինքնակամ կառույց իրականացնող կամ իրականացրած անձի նկատմամբ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցը չկիրառելը՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

(...)»:

Պատգամավոր Տարոն Մարգարյանի կողմից վերը նշված՝ առերևույթ հանցավոր արարքները կատարելու հանգամանքը հաստատվել է քրեական վարույթի նախաքննությամբ ձեռք բերված մի շարք փաստական տվյալներով:

Այսպես.

1. Սույն քրեական վարույթով նախկինում մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող Հայկ Կյուրեղյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Երևան քաղաքի Աճառյան փողոցի 40 հասցեում գտնվող «Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի զբաղեցրած հողամասի սխեմաները և եզրակացությունը կազմել է Անդրանիկ Քասարյանի հետ քննարկման արդյունքում՝ վերջինիս կողմից նշված ուրվագծով: Ինքն այդ տարածք չի գնացել, տեղազննում չի իրականացրել, հաշվի առնելով, որ մինչ այդ նշված գործով զբաղվող Կարլեն Մանուշյանի կողմից տրված եզրակացությամբ դպրոցի հողամասի սահմաններից դուրս էին մնացել կաթսայատունը և օժանդակ շինությունները, դրանց զբաղեցրած հողատարածքը ներառել է դպրոցի սահմաններում, իսկ թե ինչ հիմքերով և հիմնավորումներով է փոփոխվել դպրոցի զբաղեցրած հողամասի սահմանները՝ դրա արդյունքում դպրոցի զբաղեցրած հողամասի սահմաններից դուրս թողնելով 3.693,12 քմ մակերեսով հողամաս, չի կարող ասել, քանի որ այդ մանրամասների մեջ չի խորացել և առանց ավելորդ հարցեր տալու կատարել է վարչության պետի հանձնարարությունը:

2. Սույն քրեական վարույթով նախկինում մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող Արամ Ենգոյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2012 թվականին իրականացրել է Էրեբունի վարչական շրջանի Ավանեսով փողոցի 12 հասցեում գտնվող թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատության տարածքի տեղագրական հանույթ (գեոդեզիա): Չափագրման արդյունքում արձանագրվել է, որ մանկապարտեզի ցանկապատի մեջի տարածքի մակերեսը կազմել է 6.452,9 քմ, ինչը գեոդեզիական հանույթի տեսքով՝ էլեկտրոնային տարբերակով, ներկայացրել է Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինության վարչություն, սակայն դրանից մոտ 20 օր անց Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետ Էդիկ Վարդանյանը հայտնել է, որ կատարել է սահմանների փոփոխություն, որի արդյունքում մանկապարտեզի տարածքից պակասել է մոտ 650 քմ մակերեսով հողատարածք: Էդիկ

Վարդանյանը նշել է, որ մանկապարտեզի սահմանը պետք է հաշվել ոչ թե Տիտոգրադյան փողոցի կողմից, սահմանակից խանութներից, այլ դրանից մոտ 10 մետր հեռավորությունից, միաժամանակ հայտնելով, որ այդ հրահանգը իջեցվել է վերադասներից: Տվյալ դեպքի մասին տեղյակ է պահել իր վերադաս՝ գեոդեզիական բաժնի պետ Տարոն Գրիգորյանին, վերջինս նույնպես պնդել է, որ վերադասներից առկա է հրահանգ և ասել, որ ստորագրի հողամասի գլխավոր հատակագիծը: Ինչքան էլ, որ անօրինական են եղել այդ գործողությունները, այնուհանդերձ հակառակը չի կարողացել անել, քանի որ հստակ ցուցում է եղել, այլապես իրեն կազատեին աշխատանքից:

3. Սույն քրեական վարույթով նախկինում մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող Տիգրան Փոթիկյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Երևան քաղաքի Ավանեսովի փողոցի 12 հասցեում գտնվող թիվ 64 մանկապարտեզի տարածքի չափագրումից տեղյակ չի եղել, չափագրում չի կատարել, ճարտարապետության և քաղաքաշինության վարչության ճարտարապետ Էդուարդ Վարդանյանն է ասել, որ ստորագրի հողամասի գլխավոր հատակագիծը: Էդուարդ Վարդանյանի հետ մտել է Տարոն Գրիգորյանի մոտ հիշյալ հողատարածքի գլխավոր հատակագծի հարցով, վերջինս հայտնել է, որ տեղյակ է և ասել է, որ պետք է այն ստորագրի: Դրանից հետո ստորագրել են հողամասի գլխավոր հատակագիծը:

4. Սույն քրեական վարույթով նախկինում մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող Միքայել Հակոբյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Երևան քաղաքի Աճառյան փողոցի 40 հասցեում գտնվող «Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի զբաղեցրած հողամասի տեղագրական հանույթ չի կատարել, տեղագրական հանույթ չի տեսել, իրեն որևէ մեկը տեղագրական հանույթ չի ներկայացրել, իսկ նշված հողամասի հատակագծում ստորագրել է գեոդեզիական բաժնի պետ Տարոն Գրիգորյանի հանձնարարությամբ՝ տեսնելով Երևանի քաղաքապետի որոշումը և դրա հիման վրա թողարկվող հատակագիծը:

5. Սույն քրեական վարույթով նախկինում մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող Հայկ Պետրոսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցի 5 հասցեում գտնվող թիվ 185 դպրոցի զբաղեցրած հողատարածքում չափագրումներ կատարելու համար գնացել է նշված դպրոց և խնդրել, որ չափագրման աշխատանքներին մասնակցի դպրոցի տնօրենը և ցույց տա դպրոցի սահմանները: Իր հիշելով՝ դպրոցի տնօրենը տեղում չի եղել, ուստի իրեն է մոտեցել և չափագրման աշխատանքներին է մասնակցել մի կին, ով եղել է դպրոցի փոխտնօրենը կամ տնտեսվարը, նա տնօրենի կողմից լիազորված է եղել մասնակցելու այդ աշխատանքներին: Նշել է, որ դպրոցի ներկայացուցիչն իրեն ցույց է տվել դպրոցի հողատարածքի սահմանները և նրա կողմից մատնացույց արված սահմաններով էլ ֆիքսվել են դպրոցի հողատարածքի չափերը և սահմանները ու կազմել գեոդեզիական հանույթ:

Հայկ Պետրոսյանը Համլետ Քարամյանի հետ առերես հարցաքննության ընթացքում հայտնել է, որ դպրոցի տարածքում չափագրումներ կատարելու ընթացքում

իրեն որևէ մեկը չի ուղեկցել, դպրոցից որևէ մեկը ներկա չի եղել և դպրոցի սահմանները իրեն որևէ մեկը մատնացույց չի արել:

6. Վկա Համլետ Քարամյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 1991 թվականից հանդիսանում է Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցի 5 հասցեում գտնվող թիվ 185 դպրոցի տնօրենը: 2013 թվականի ամռանը, հավանաբար օգոստոս ամսին, գնացել է ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետ Արման Սահակյանի մոտ, որպեսզի վերջինս ստորագրի դպրոցի ֆինանսական հարցերի հետ կապված համապատասխան փաստաթղթեր: Արման Սահակյանը նշված ժամանակահատվածում հանդիսացել է իրենց դպրոցի կառավարման խորհրդի նախագահը, բացի այդ, նա եղել է նույն դպրոցի աշակերտ, նրա հետ ունեցել է մտերիմ հարաբերություններ, իսկ Արման Սահակյանի մայրը՝ Ժաննա Աղաբաբյանը հանդիսացել է իրենց դպրոցի ուսմասվարը: Նշված այցի ժամանակ Արման Սահակյանն իրեն ասել է, որ դիմում ներկայացնի դպրոցի տարածքի սահմանների վերաճշտման համար, որպեսզի հնարավոր լինի բարեկարգել դպրոցի տարածքը: Արման Սահակյանի առաջարկած բովանդակությամբ գրել է նրան հասցեագրված դիմում և այն հանձնել պետական գույքի կառավարման վարչության քարտուղարություն: Դրանից հետո դիմումի հետ կապված որևէ պետական կառույցի կամ անձի, այդ թվում՝ չափագրողների, ճարտարապետների կամ քաղաքապետարանի այլ աշխատակիցների հետ չի առնչվել, նման անձինք դպրոցի տարածք չեն գնացել և չափագրումներ չեն կատարել: Որոշ ժամանակ անց տեղեկացել է, որ դպրոցի՝ մոտ 15.000 քմ մակերեսով հողամասից օտարվել է մոտ 4.000 քմ տարածք և դպրոցի տարածքը դարձել է մոտ 11.000 քմ: Դպրոցի տարածքից օտարվել է Հ. Բեկնազարյան փողոցի երկայնքով ձգվող՝ փողոցի երթևեկելի մասին կից հողատարածքը, Հ. Բեկնազարյան փողոցից դեպի դպրոց տանող ավտոճանապարհի ձախակողմյան հատվածից հողատարածք և դպրոցի հետնամասից հողակտոր: Վերը նշված 1-ին և 2-րդ հողատարածքներում կատարվել են շինարարական աշխատանքներ, փողոցի երկայնքով կառուցվել են տարբեր խանութներ, հացի փուռ, իսկ 2-րդ հողակտորում կառուցվել են բնակելի տներ, 3-րդ հողակտորում մի պահ իրականացվել են չափագրման աշխատանքներ, սակայն մինչ օրս որևէ շինարարություն չի կատարվել: Քանի որ վարչություն դիմում ներկայացնելուց հետո դպրոցի տարածքում որևէ բարեկարգման աշխատանք չի կատարվել, ավելի ուշ գիտակցել է, որ իր կողմից ներկայացված դիմումը կրել է ձևական բնույթ և այդ դիմումի իրական պատճառը հանդիսացել է վերը նշված հողատարածքների օտարումը: Օտարված հողատարածքների շինարարության պատճառով բարդացել և դժվարացել է դպրոցի մուտքին մոտեցող ավտոճանապարհով անցնելը: Այդ ամենի մասին բանավոր հայտնել է թե՛ վարչական շրջանի ղեկավարությանը, թե՛ քաղաքապետ Տարոն Մարգարյանին և թե՛ Արման Սահակյանին, սակայն վերջիններս հայտնել են, որ ամենի ինչ օրենքի սահմաններում է, ինքը դրա հետ գործ չունի: Արման Սահակյանին նաև ասել է, որ դպրոցի հողատարածքը պակասել է մոտ 4.000 քմ-ով, որը հետագայում կարող էր ծառայել դպրոցին, սակայն վերջինս պատասխանել է, որ դրա հետ ինքը կապ չունի, քաղաքապետարանն է դա

կազմակերպել: Արտավազդ Սարգսյանը և Հարություն Մելոյանը եղել են իր աշակերտները, եղել են նույն դասարանից և շատ մոտ ընկերներ:

7. **Վկա՝ Համլետ Քարամյանի և մեղադրյալ՝ Անդրանիկ Քասարյանի միջև կատարվել է առերես հարցաքննություն**, որի ընթացքում Համլետ Քարամյանը հայտնել է, որ դպրոցի տարածք չափագրողներ չեն գնացել, դպրոցի տարածքում չափագրողների չի տեսել, իրեն որևէ մեկը չի ասել, որ դպրոցի տարածք չափագրողներ են գնացել կամ, որ չափագրում է կատարվել: Անդրանիկ Քասարյանը, ի պատասխան Համլետ Քարամյանի՝ հայտնել է, որ դրա հետ կապված առարկություն չունի, քանի որ իր հետ կապված չէ՝ միաժամանակ նշելով, որ տարածքի չափագրությանը պատվիրատուի մասնակցությունը պարտադիր չէ:

8. **Վկա՝ Համլետ Քարամյանի և մեղադրյալ՝ Արման Սահակյանի միջև կատարվել է առերես հարցաքննություն**, որի ընթացքում Համլետ Քարամյանը հայտնել է, որ չնայած նրան, որ իր նախկին ցուցմունքներում հայտնել է, որ դիմումը գրել է Արման Սահակյանի աշխատասենյակում, նրա առաջարկով և թելադրանքով, սակայն հնարավոր է, որ շփոթել է: Արման Սահակյանին հարցրել է, թե ինչպես պետք է լուծվեն դպրոցի սահմաններում առկա խնդիրները, վերջինս ասել է, որ դրա համար պետք է դիմում գրի, իսկ դիմումի բովանդակությունը թելադրել ասելով՝ նկատի է ունեցել, որ դիմումի բովանդակությունը քննարկել է Արման Սահակյանի հետ, իսկ դրանից հետո էլ Արման Սահակյանին հարցրել է, թե ինչ ընթացք է ունեցել իր դիմումը, վերջինս պատասխանել է, որ դիմումը հասցեագրել է Երևանի քաղաքապետարան՝ դիմումի ընթացքը լուծելու համար: Արման Սահակյանը, ի պատասխան Համլետ Քարամյանի՝ նշել է, որ, լսելով Քարամյանի բարձրացրած խնդիրը, մատնացույց է արել օրենքով սահմանված լուծման տարբերակը և իր իրավասության սահմաններում նշված դիմումը սահմանված կարգով ուղարկել է լիազոր մարմին, ինչից հետո երբևէ որևէ առնչություն նշված դպրոցի սահմանների ճշտման գործընթացին չի ունեցել:

9. **Վկա՝ Համլետ Քարամյանի և մեղադրյալ՝ Հայկ Պետրոսյանի միջև կատարվել է առերես հարցաքննություն,** որի ընթացքում Համլետ Քարամյանը հայտնել է, որ իր մասնակցությամբ դպրոցի զբաղեցրած հողատարածքում չափագրում չի կատարվել, որևէ մեկին չի լիազորել, չի հանձնարարել մասնակցել չափագրման աշխատանքների, նույնիսկ այդ հարցով իրեն դիմող չի եղել, որևէ մեկին դպրոցի սահմանները մատնացույց անելու հանձնարարություն չի տվել և առանց իրեն տեղյակ պահելու որևէ մեկը չէր կարող մատնացույց անել դպրոցի սահմանները: Դպրոցի տանիք բարձրանալ հնարավոր էր միայն տնտեսվար Էդուարդ Կովկասյանի կամ պահակ Ժորա Մարտիրոսյանի ուղեկցությամբ, իսկ այդ դեպքում էլ առանց իր գիտության որևէ մեկը դպրոցի տանիք չի բարձրացել, բացի այդ, անհնար է, որ որևէ կին կարողանար բացել դպրոցի տանիքի դուռը: Հայկ Պետրոսյանը, ի պատասխան Համլետ Քարամյանի՝ հայտնել է, որ դպրոցի տարածքում կատարել է չափագրման աշխատանքներ, բարձրացել է դպրոցի տանիք, դպրոցի աշխատակիցներից չի հիշում, թե ով, սակայն աշխատակիցը եղել է կին, բացել է դպրոցի տանիքի դուռը, բարձրացել են տանիք, կատարել է չափագրում և չափագրում կատարելու համար պարտադիր է եղել

բարձրանալ տանիք, քանի որ դպրոցը ունեցել է բարդ կառուցվածք: Միաժամանակ նշել է, որ դպրոցի տարածքում չափագրումներ կատարելու ընթացքում իրեն որևէ մեկը չի ուղեկցել, դպրոցից որևէ մեկը ներկա չի եղել և դպրոցի սահմաններն իրեն որևէ մեկը մատնացույց չի արել:

10. Սույն քրեական վարույթով նախկինում մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող Տարոն Գրիգորյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2011 թվականի մայիսից մինչև 2015 թվականի մայիսը հանդիսացել է Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՓԲ ընկերության գեոդեզիական բաժնի պետը: Իր պարտականությունների մեջ են մտել քաղաքացիների, իրավաբանական անձանց, պետական մարմինների կողմից հողատարածքների գեոդեզիաների կատարման պատվերների ընդունումը, դրանց բաշխումը ընկերության գեոդեզիստների միջև, հսկողությունը պատվերները ժամանակին և օրենքով սահմանված կարգով կատարելու նկատմամբ: Քանի որ ընկերությունում աշխատող գեոդեզիստները լիցենզավորված մասնագետներ են, ուստի նրանց աշխատանքների իսկությունը իր կողմից չի ստուգվել: Պատվերի կամ դիմումի դեպքում գեոդեզիստի կողմից կատարվել է այց դիմումատուի տարածք, որտեղ պատվիրատուի կամ նրա լիազորված անձի պարտադիր մասնակցությամբ տեղում կատարվել են չափագրումներ, կազմվել է համապատասխան գեոդեզիական հանույթ, որը ստորագրվել է կատարող գեոդեզիստի կողմից, որից հետո այն կնիքվել և ստորագրվել է «Քաղաքաշինություն» ՓԲ ընկերության տնօրենի կողմից և ուղարկվել ճարտարապետական վարչություն: Դրանից հետո կատարող ճարտարապետն իր հերթին այցելել է դիմումատուի տարածք, կատարել տեղատեսություն դիմումատուի կամ նրա լիազորված անձի հետ և համաձայնեցրել հողատարածքի սահմանները և չափերը: Ճարտարապետի կողմից դրական եզրակացություն տալուց հետո ամբողջական փաթեթն ուղարկվել է քաղաքապետարան, որտեղ տարբեր վարչություններով և բաժիններով անցնելուց հետո ներկայացվել է քաղաքապետին, նախապատրաստվել է քաղաքապետի կողմից տվյալ հողատարածքը դիմումատուին հանձնելու մասին համապատասխան որոշում: Այնուհետև փաթեթը վերադարձվել է քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն, որտեղ կազմվել է հողամասի հատակագիծ, որը ստորագրվել է կատարող լիցենզավորված գեոդեզիստի, «Քաղաքաշինություն» ՓԲ ընկերության տնօրենի, գեոդեզիական բաժնի պետի, ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի, ՃՔՎ ինժեներական ենթակառուցվածքների բաժնի պետի և կատարող ճարտարապետի կողմից: Դրանից հետո այն ուղարկվել է քաղաքապետի հաստատմանը: Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոց 5 հասցեում գտնվող թիվ 185 դպրոցի տարածքի չափագրման աշխատանքները կատարվել են գեոդեզիստ Հայկ Պետրոսյանի կողմից: Ինքը նկատել է, որ նշված դպրոցի հողատարածքի մակերեսը նվազել է, սակայն Հայկ Պետրոսյանը պատասխանել է, որ չափագրումը կատարվել է ըստ պատվիրատուի, այսինքն՝ տնօրենի կամ նրա ներկայացուցչի ցուցումների, այդ իսկ պատճառով սահմանները փոփոխվել են ըստ նույն անձի պահանջի և հողատարածքի մակերեսը փոքրացել է նույնպես պատվիրատուի պահանջով: Երևան քաղաքի Աճառյան փողոց 40

հասցեում գտնվող «Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի զբաղեցրած հողատարածքի չափագրման աշխատանքները չի կարող ասել, թե կոնկրետ ում կողմից են կատարվել, սակայն հողամասի հատակագծից երևում է, որ տարածքը չափագրվել է գեոդեզիստ Միքայել Հակոբյանի կողմից, քանի որ վերջինս է ստորագրել հողամասի հատակագիծը: Չի կարող ասել, թե ինչ հիմքերով և հիմնավորումներով են փոփոխվել դպրոցի զբաղեցրած հողամասի սահմանները և նվազեցվել հողամասի մակերեսը, սակայն կարծում է, որ դպրոցի հողատարածքի սահմանների փոփոխումը և հողամասի առանձնացումը տեղի է ունեցել սեփականատիրոջ համաձայնությամբ, քանի որ հողամասի հատակագծից հստակ երևում է, որ անճշտության խնդիր լինել չէր կարող: Ինչ վերաբերվում է նրան, որ Միքայել Հակոբյանը նշված դպրոցի տարածք չի այցելել և չափագրման աշխատանքներ չի կատարել, իսկ հողամասի հատակագծում ստորագրել է իր պահանջով, ապա նշվածի հետ համաձայն է, քանի որ տեղագրական հանույթը հնարավոր է կազմված լինի չլիցենզավորված մասնագետի կողմից, իսկ կադաստրային կոմիտեում գույքը գրանցելու համար անհրաժեշտ է, որ այն ստորագրված լինի լիցենզավորված մասնագետի կողմից, ուստի հանձնարարել է Միքայել Հակոբյանին ստորագրել հողամասի հատակագծում: Միաժամանակ նշել է, որ չի հիշում, թե տվյալ տեղագրական հանույթը որ մասնագետի կողմից է կազմվել: Նույնաբնույթ պարզաբանումներ է տվել նաև 2012 և 2014 թվականներին Երևան քաղաքի Ավանեսովի փողոցի թիվ 12 հասցեում գտնվող «Երևանի թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության զբաղեցրած հողատարածքի չափագրումների վերաբերյալ, միաժամանակ նշելով, որ ուսումնական հաստատության զբաղեցրած հողամասի սահմանների փոփոխության մասին տեղյակ չի եղել, բացի այդ, չի եղել բողոք հողամասի մակերեսը պակասելու վերաբերյալ:

11. Արամ Ենգոյանի և Տարոն Գրիգորյանի միջև կատարված առերես հարցաքննության ընթացքում Արամ Ենգոյանը հայտնել է, որ 2012 թվականին իրականացրել է Երեբունի վարչական շրջանի Ավանեսովի փողոցի 12 հասցեում գտնվող թիվ 64 նախաուսումնական հաստատության տարածքի գեոդեզիա: Չափագրման արդյունքում պարզվել է, որ մանկապարտեզի տարածքը կազմել է 6.452,9 քմ, ինչն էլեկտրոնային տարբերակով ներկայացրել է Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինության վարչություն, սակայն դրանից մոտ 20 օր անց Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետ Էդիկ Վարդանյանը հայտնել է, որ կատարել է սահմանների փոփոխություն, որի արդյունքում մանկապարտեզի տարածքը պակասել է մոտ 650 քմ մակերեսով: Էդիկ Վարդանյանը նշել է, որ մանկապարտեզի տարածքը պետք է չափագրել ոչ թե Տիտոգրադյան փողոցի կողմից սահմանակից խանութներից, այլ դրանից մոտ 10 մետր հեռավորությունից՝ միաժամանակ հայտնելով, որ այդ հրահանգն իջեցվել է վերադասներից: Տվյալ դեպքի մասին տեղյակ է պահել իր վերադաս՝ գեոդեզիական բաժնի պետ Տարոն Գրիգորյանին, վերջինս նույնպես պնդել է, որ վերադասներից առկա է հրահանգ և ասել, որ ստորագրի հողամասի գլխավոր հատակագիծը: Տարոն Գրիգորյանը, ի պատասխան Արամ Ենգոյանի՝ հայտնել է, որ Արամ Ենգոյանին նման բան չի ասել:

12. Տիգրան Փոթիկյանի և Տարոն Գրիգորյանի առերես հարցաքննության ընթացքում Տիգրան Փոթիկյանը հայտնել է, որ Երևան քաղաքի Ավանեսովի փողոցի 12 հասցեի թիվ 64 մանկապարտեզի տարածքի չափագրումից տեղյակ չի եղել, չափագրում չի կատարել, ճարտարապետության և քաղաքաշինության վարչության ճարտարապետ Էդուարդ Վարդանյանը ասել է, որ ստորագրի հողամասի գլխավոր հատակագիծը: Էդուարդ Վարդանյանի հետ մտել է Տարոն Գրիգորյանի մոտ հիշյալ հողատարածքի գլխավոր հատակագծի հարցով, վերջինս հայտնել է, որ ինքն էլ է տեղյակ և ասել, որ ստորագրի այն: Դրանից հետո ստորագրել են գլխավոր հատակագիծը: Տարոն Գրիգորյանը, ի պատասխան Տիգրան Փոթիկյանի՝ հայտնել է, որ Տիգրան Փոթիկյանը սխալ է հասկացել, ինքն ասել է, որ ամեն ինչ նորմալ է, որևէ խնդիր չկա և նա ստորագրել է:

13. Վկա Էդուարդ Բարսեղյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2011 թվականից հանդիսացել է Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՓԲ ընկերության տնօրենը: Ընկերությունն ունի երեք բաժիններ, որոնցից մեկն իրականացնում է գեոդեզիական չափագրման աշխատանքներ: Նշված բաժնի աշխատակիցների պարտականությունների մեջ է մտնում տեղագրական հանույթի չափագրումներ կատարելը: Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցի 5 հասցեում գտնվող թիվ 185 դպրոցի տարածքի սահմանների ճշտման գործընթացում հողամասի սահմանների փոփոխությունից և մակերեսի նվազեցումից տեղյակ չի եղել, հողամասի չափագրումների ճշգրտության համար պատասխանատու են կատարող գեոդեզիստը և գեոդեզիական բաժնի պետը: Երևան քաղաքի Ավանեսով փողոցի 12 հասցեում գտնվող մանկապարտեզի տեղագրական հանույթը, ըստ հողամասի հատակագծերում առկա ստորագրությունների, 2012 թվականին իրականացրել է Արամ Ենգոյանը, իսկ 2014 թվականին՝ Տիգրան Փոթիկյանը:

14. Վկա Խաչատուր Երանոսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2014 թվականին հետաքրքրվել է Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասում հողատարածք ձեռք բերելու համար և հետևել է Երևանի քաղաքապետարանի կողմից աճուրդով վաճառվող հողերի հայտարարություններին: Չի հիշում, թե երբ, տեսել է հայտարարություն, որ Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցում աճուրդով վաճառվում է հողատարածքը: Մասնակցել է հողատարածքի աճուրդային վաճառքին, իր հետ մասնակցել է նաև Հարություն Մելոյանը, ում ճանաչել է վաղուց, վերջինիս հետ ծառայել է ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանությունում, ունեցել են նորմալ հարաբերություններ: Չի հիշում, թե որքան է եղել հողատարածքի մեկնարկային գինը և որքան գումար է առաջարկվել իր կամ Հարություն Մելոյանի կողմից, սակայն աճուրդում հաղթող է ճանաչվել Հարություն Մելոյանը:

15. Վկա Արթուր Հովակիմյանը ցուցմունք է տվել այն մասին, որ աշխատել է ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունում և հանդիսացել է նույն վարչության պետ Արման Սահակյանի վարորդը, բացի այդ վերջինիս հետ գտնվել է մտերիմ հարաբերությունների մեջ: 2013-2014 թվականների ընթացքում, ստույգ ժամանակահատվածը չի հիշում, ցանկացել է իրենց թաղամասում հողատարածք ձեռք

բերել: Այդ ընթացքում իր ընկեր Լևոն Հարությունյանը, ով նույնպես աշխատում էր պետական գույքի կառավարման վարչությունում և հանդիսանում էր Արման Սահակյանի օգնականը, իրեն ասել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից աճուրդով հողատարածք է վաճառվում Հ. Բեկնազարյան փողոցի հարակից հատվածում՝ թիվ 185 դպրոցի մոտակայքում, ինքը ցանկանում է մասնակցել աճուրդին և իրեն առաջարկել է նույնպես մասնակցել այդ աճուրդին, և կախված իրենց կողմից առաջարկված գնից, ում որ հարմար կլինի նա էլ ձեռք կբերի աճուրդով վաճառվող հողատարածքը: Լևոն Հարությունյանից տեղեկացել է, թե ինչ պետք է անի աճուրդին մասնակցելու համար, որից հետո գրանցվել է, կատարել է համապատասխան վճարումներ և Լևոն Հարությունյանի հետ գնացել ու մասնակցել են այդ աճուրդին: Քանի որ նշված հողատարածքի համար ավելի բարձր գին է առաջարկել Լևոն Հարությունյանը, նա էլ ճանաչվել է աճուրդում հաղթող և ձեռք բերել այդ հողատարածքը:

16. Վկա Վահագն Հարությունյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2012 թվականի ապրիլից մինչև 2018 թվականի հունիսի 28-ը աշխատել է ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունում՝ որպես աշխատակազմի ղեկավար: ՀՀ կառավարության 2006 թվականի թիվ 346-Ն որոշմամբ ՀՀ բոլոր ՊՈԱԿ-ների անշարժ գույքը հանդիսանում է ՀՀ սեփականությունը, որը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել է նշված ՊՈԱԿ-ներին, այդ թվում՝ դպրոցներին: Այդ գործընթացի կարգավորումը կատարվել է ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության կողմից: Նշված կարգով էլ Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցի 5 հասցեում գտնվող թիվ 185 դպրոցի տարածքը և անշարժ գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրվել է «Թիվ 185 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին՝ համապատասխան պայմանագիր կնքելով դպրոցի տնօրենի հետ: 2013 թվականին դպրոցի տնօրեն Համլետ Քարամյանի կողմից ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն ներկայացված՝ դպրոցի հողատարածքի սահմանների վերաճշտում կատարելու վերաբերյալ դիմումի և դրա ընթացքի մասին հստակ տեղեկություններ հայտնել չի կարող, քանի որ անցել է բավականին ժամանակ, սակայն հստակ կարող է ասել, որ դպրոցի հողատարածքի չափագրման աշխատանքներին մասնակցելու համար Երևանի քաղաքապետարանից իրենց վարչությանը չեն դիմել և վարչության որևէ աշխատակից դպրոցի հողատարածքի չափագրման աշխատանքներին չի մասնակցել:

17. Վկա Էդգար Մկրտչյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2015 թվականի մարտին Լևոն Հարությունյանից 15.000.000 ՀՀ դրամով ձեռք է բերել Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցի 5/17 հասցեում գտնվող 1.138,76 քմ մակերեսով հողամասը: Հողամասը ձեռք բերելուց հետո այդ տարածքում կառուցել են բնակելի տներ:

18. Վկա Գայանե Դավթյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 1997 թվականից աշխատում է ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունում՝ որպես պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի առաջատար մասնագետ: 2013 թվականի օգոստոս ամսին Երևանի թիվ 185 դպրոցի տնօրենի կողմից ներկայացված դիմումին ընթացք տալու համար այն մակագրվել է իրեն: Դիմումին ընթացք տալու հարցը քննարկվել է ղեկավարության հետ, կոնկրետ չի հիշում, թե ում հետ, սակայն քննարկման

արդյունքում որոշվել է նախապատրաստել գրություն Երևանի քաղաքապետարան՝ սահմանների ճշտում կատարելու նպատակով, որն էլ վարչության պետ Արման Սահակյանի կողմից ստորագրվելուց հետո ուղարկվել է Երևանի քաղաքապետարան: Դրանից հետո տեղյակ չէ, թե Երևանի քաղաքապետարանում ինչ ընթացք է տրվել դիմումին, սակայն նշել է, որ պետական սեփականություն հանդիսացող հողատարածքը քաղաքապետարանն իրավունք չուներ օտարել առանց պետական գույքի կառավարման վարչության հետ համաձայնեցնելու:

19. Մեղադրյալ Սահակ Ռոզիկյանը վկայի դատավարական կարգավիճակով ցուցմունք է տվել այն մասին, որ 2014-2015 թվականների ընթացքում ցանկացել է ձեռք բերել հողատարածք՝ խանութ կառուցելու և առևտրով զբաղվելու համար: Այդ ընթացքում տեղեկացել է, որ Երևան քաղաքի Բեկնազարյան փողոցում՝ թիվ 185 դպրոցի հարակից տարածքում, անմիջապես փողոցին հարող տարածքում վաճառվում է հողատարածք: Հետաքրքրվել և իմացել է, որ այդ հողատարածքը պատկանում է Երևան քաղաքի 16 թաղամասի բնակիչ Հարություն Մելոյանին, ում ճանաչել է որպես իրենց թաղամասի բնակիչ: Հարություն Մելոյանի հետ հանդիպել և համաձայնության է եկել հողատարածքը ձեռք բերելու շուրջ: 2015 թվականի հունվար ամսին Հարություն Մելոյանից 10.000.000 ՀՀ դրամով ձեռք է բերել Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցի 5/2 հասցեում գտնվող 633.25 քմ մակերեսով հողատարածքը: Դրանից հետո հողատարածքում ցանկացել է սկսել շինարարություն, սակայն երբ հաշվարկել է, հասկացել է, որ այդ հողատարածքը մեծ է խանութ կառուցելու համար, ուստի դիմել է անշարժ գույքի պետական կադաստր և նշված հողատարածքը բաժանել է երեք առանձին հողակտորների՝ երկուսը՝ մոտ 250 քմ մակերեսով, իսկ մեկը՝ մոտ 103 քմ մակերեսով: Այդ ընթացքում որոշել է 250 քմ մակերեսով հողակտորներից մեկը վաճառել: Այդ հողակտորը գնելու նպատակով իր հետ հանդիպել է իրենց թաղամասի բնակիչ, ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության նախկին պետ Արման Սահակյանի եղբայրը՝ Տիգրան Սահակյանը: Վերջիններիս ճանաչել է որպես թաղամասի բնակիչներ: Տիգրանի հետ համաձայնության են եկել հողատարածքը ձեռք բերելու շուրջ, սակայն չի հիշում, թե որքան գումարով նրան է վաճառել Հ. Բեկնազարյան փողոցի 5/22 հասցեով հողամասը:

20. Վկա Հրայր Ավագյանը ցուցմունքով հայտնել է, որ Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցի 5/18 հասցեում գտնվող 1.092,85 քմ մակերեսով հողատարածքը 2014 թվականի հոկտեմբերին առուվաճառքի պայմանագրով՝ 5.000.000 ՀՀ դրամով, ձեռք է բերել Կարեն Ունուսյանից:

21. Մեղադրյալ Հարություն Մելոյանը վկայի դատավարական կարգավիճակով ցուցմունք է տվել այն մասին, որ 2012 թվականի նոյեմբերի 23-ից մինչև 2013 թվականի մայիսի 20-ը պայմանագրային հիմունքներով աշխատել է Աջափնյակ վարչական շրջանի աշխատակազմում, 2014 թվականի հուլիսի 3-ին նշանակվել է Աջափնյակ վարչական շրջանի աշխատակազմում որպես առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետի տեղակալ, աշխատել է մինչև 2017 թվականը, որից հետո նշանակվել է նույն աշխատակազմում որպես տնտեսվար և աշխատանքից ազատվել է 2018 թվականի

հուլիսի 1-ին: 2014 թվականին ցանկացել է հողատարածք ձեռք բերել իրենց թաղամասում: Այդ ընթացքում տեղեկացել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից աճուրդով վաճառվում է թիվ 185 դպրոցի դիմացի հողատարածքը, որի հետ կապված դեռ վաղուց ունեցել է նպատակներ, նշված հատվածում ունեցել է փոքր մետաղյա տաղավար և զբաղվել է առևտրով: Աճուրդին մասնակցելու համար ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթեր, կատարել համապատասխան վճարումներ և մասնակցել աճուրդին: Իր հետ որպես գնորդ աճուրդին մասնակցել է նաև Խաչատուր Երանոսյանը, սակայն վերջինիս ասել է, որ շուտվանից մտադրություն է ունեցել ձեռք բերել այդ հողատարածքը և նա թողել է, որ աճուրդում հաղթող ճանաչվի ինքը: Խաչատուր Երանոսյանին ճանաչել է վաղուց, նրա հետ աշխատել են ռազմական ոստիկանությունում: Երևանի քաղաքապետարանից աճուրդով ձեռք է բերել Բեկնազարյան 5/2 հասցեում գտնվող մոտ 1335 քմ մակերեսով հողատարածքը 14.000.000 ՀՀ դրամով: Հողամասը ձեռք բերելուց հետո այն բաժանել է երեք մասերի, ներքևի հատվածը՝ 633.25 քմ մակերեսով, որը մնացել է 5/2 հասցեով, մեջտեղի հատվածը՝ 450 քմ մակերեսով, որին շնորհվել է Բեկնազարյան 5/19 հասցեն, և վերևի հատվածը՝ 250 քմ մակերեսով, որին շնորհվել է 5/20 հասցեն: Մեջտեղի հատվածը պահել է իրեն, իսկ մյուս երկու հողակտորները վաճառել է: Բեկնազարյան 5/20 հասցեում գտնվող հողամասը վաճառել է Արմեն Բունիաթյանին, ով եղել է իրեն անծանոթ, իսկ Բեկնազարյան 5/2 հասցեի հողամասը վաճառել է իրենց թաղամասի բնակիչ Սահակ Ռոզիկյանին: Երևանի նախկին քաղաքապետ Տարոն Մարգարյանին և ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության նախկին պետ Արման Սահակյանին ճանաչում է որպես նշված պաշտոնները զբաղեցնող անձանց, իսկ Աջափնյակ համայնքի նախկին ղեկավար Արտավազդ Սարգսյանն իր ընկերն է, բացի այդ, վերջինս նշված ժամանակահատվածում հանդիսացել է իր ղեկավարը:

22. Վկա Ավետիս Ավագյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2012 թվականից աշխատում է Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում, 2013 թվականից զբաղեցնում է քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնը: 2013 թվականին Երևանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանից ստացել է գրություն, որով խնդրվել է տալ պարզաբանում՝ թիվ 185 դպրոցին հատկացված հողամասի մակերեսի չափի փոփոխության վերաբերյալ: Չնայած գրությամբ պահանջված պարզաբանումը չի վերաբերել վարչական շրջանի լիազորություններին կամ իրավասություններին, սակայն պատասխան գրությամբ հայտնել են, որ տվյալ տարածքում առկա են բնակիչների կողմից օգտագործվող ավտոտնակներ և դրանք չեն ծառայում դպրոցին: Այնուհետև, 2014 թվականի ապրիլին իր կողմից կազմվել են Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանին հասցեագրված թվով երեք գրություններ, որոնց համաձայն՝ մրցութային և աճուրդային հանձնաժողովին են ներկայացվել թիվ 185 դպրոցի հարակից տարածքում գտնվող և Երևան համայնքին պատկանող թվով 3 առանձին հողակտորների ելակետային տվյալները՝ հասարակական նշանակության օբյեկտ, ինչպես նաև բնակելի տներ կառուցելու համար՝ միաժամանակ հայտնելով, որ Աջափնյակ վարչական շրջանի

ղեկավարի աշխատակազմն այդ հարցի կապակցությամբ առարկություն չունի: Տեղյակ է, որ հողակտորներից մեկը, որը գտնվում է Բեկնազարյան փողոցի հարակից հատվածում, աճուրդով ձեռք է բերել Հարություն Մելոյանը, ով այդ ժամանակ աշխատել է Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում և նրա հետ ունեցել է մոտ հարաբերություններ, բացի այդ, Հարություն Մելոյանը հանդիսացել է Արտավազդ Սարգսյանի մանկության ընկերը: Հարություն Մելոյանի կողմից հողատարածքն աճուրդով ձեռք բերելուց հետո իր խորհուրդներով և տեխնիկական աջակցությամբ օգնել է նրան կատարել այդ հողատարածքների գրանցումը: Հետագայում տեղեկացել է, որ Հարություն Մելոյանը հողատարածքի մի մասը վաճառել է Սահակ Ռոզիկյանին, այդ ժամանակ նույնպես օգնել է նրանց համապատասխան դիմում կադաստր ներկայացնելու, ինչպես նաև դրա պատասխանը ստանալու հարցում: Հարություն Մելոյանի խնդրանքով համաձայնել է, որ Սահակ Ռոզիկյանը դիմումի մեջ նշի, որ պատասխանն ինքը վերցնի: Ավելի ուշ այն վերցրել և տվել է Հարություն Մելոյանին, իսկ վերջինս էլ այն պետք է տար Սահակ Ռոզիկյանին: Ինչ վերաբերում է նրան, որ պետական գույքի կառավարման վարչության նախկին պետ Արման Սահակյանի եղբոր՝ Տիգրան Սահակյանի կողմից կադաստրի կոմիտե ներկայացված մի շարք դիմումներում նույնպես նշվել է, որ անհրաժեշտ փաստաթղթերը տրամադրվեն իրեն, ապա չի կարող հիշել և ասել, թե Տիգրան Սահակյանի կողմից կադաստրի կոմիտե ներկայացված դիմումներում ինչու է նշվել իր անունը, սակայն ենթադրում է, որ տվյալ դեպքում նույնպես Հարություն Մելոյանի խնդրանքով է վերցրել կամ համաձայնել, որ դիմումում նշվի իր անունը:

23. Մեղադրյալ Լևոն Հարությունյանը վկայի դատավարական կարգավիճակով ցուցմունք է տվել այն մասին, որ 2012 թվականից մինչև 2018 թվականը աշխատել է ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունում՝ որպես վարչության պետ Արման Սահակյանի օգնական: 2014 թվականի ընթացքում տեղեկացել է, որ Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցում քաղաքապետարանի կողմից աճուրդով հողատարածքներ են վաճառվում: Աճուրդին մասնակցելու համար Երևանի քաղաքապետարան է ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթեր և կատարել համապատասխան մուծումներ: 2014 թվականին տեղի է ունեցել աճուրդը, որին որպես գնորդ մասնակցել է նաև Արման Սահակյանի վարորդ Արթուր Հովակիմյանը, սակայն հստակ չի հիշում, թե Արթուր Հովակիմյանն իր խնդրանքով է մասնակցել աճուրդին՝ աճուրդը կայանալու համար, թե վերջինս իր նախաձեռնությամբ է մասնակցել և ցանկացել աճուրդով գնել այդ հողատարածքը: Աճուրդում հաղթող է ճանաչվել ինքը և Երևանի քաղաքապետարանից մոտ 7.000.000 ՀՀ դրամով ձեռք է բերել Բեկնազարյան փողոց 5/17 հասցեում գտնվող 1138.76 քմ մակերեսով հողատարածքը: Որոշ ժամանակ անց՝ 2015 թվականի սկզբներին, իրեն գումար է անհրաժեշտ եղել, ուստի նշված հողամասը 15.000.000 ՀՀ դրամով վաճառել է Էդգար Մկրտչյանին: Ինչ վերաբերվում է նրան, որ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում դիմում է ներկայացրել, որ Հ. Բեկնազարյան փողոց 5/17 հասցեի միասնական տեղեկանքը տրամադրվի Արմեն Սարգսյանին, ապա հստակ չի հիշում, թե վերջինս ինչ առնչություն է ունեցել այդ գործընթացների հետ, հավանաբար

նա եղել է հողատարածքների առուվաճառքով զբաղվող կամ այդ գործընթացներին ծանոթ անձ, ուստի այդ պատճառով էլ դիմել է, որպեսզի իր փոխարեն տեղեկանքը տրամադրվի նրան:

24. Մեղադրյալ Կարեն Ունուսյանը վկայի դատավարական կարգավիճակով ցուցմունք է տվել այն մասին, որ 2013-2014 թվականների ընթացքում ցանկացել է տուն կառուցելու նպատակով հողատարածք ձեռք բերել Երևան քաղաքի Աջափնյակ կամ Մալաթիա վարչական շրջաններում: Այդ ընթացքում Երևանի քաղաքապետարանի էլեկտրոնային կայքից տեղեկացել է, որ Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցում քաղաքապետարանի կողմից աճուրդով հողատարածքներ են վաճառվում: Աճուրդին մասնակցելու համար Երևանի քաղաքապետարան է ներկայացրել համապատասխան փաստաթղթեր և կատարել մուծումներ: Քանի որ տվյալ հողատարածքի աճուրդին մասնակցելու հայտ ներկայացնող միայն ինքն է եղել, իսկ աճուրդը կայանալու համար օրենքով պարտադիր է եղել առնվազն երկու քաղաքացու մասնակցություն, ուստի խնդրել է իր մտերիմ ընկեր Արմեն Սարգսյանին, որպեսզի վերջինս մասնակցի աճուրդին և հանդես գա որպես երկրորդ մասնակից: Որոշ ժամանակ անց տեղի է ունեցել աճուրդը, որին մասնակցել են ինքը և Արմեն Սարգսյանը, աճուրդում հաղթող է ճանաչվել ինքը և մոտ 6.900.000 ՀՀ դրամով Երևանի քաղաքապետարանից ձեռք է բերել Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցի 5/18 հասցեում գտնվող մոտ 1.092 քմ մակերեսով հողատարածքը: Քանի որ այդ ժամանակ ինքը քաղաքից պետք է բացակայեր, ուստի կադաստրում դիմում է գրել, որ միասնական տեղեկանքը և մյուս անհրաժեշտ փաստաթղթերը տրամադրվեն Արմեն Սարգսյանին: 2014 թվականի աշնանն իր ծանոթ Հրայր Ավագյանից տեղեկացել է, որ նա ցանկանում է հողատարածք ձեռք բերել 16-րդ թաղամասում, իսկ այդ ժամանակ իրեն գումար է անհրաժեշտ եղել, ուստի նրան առաջարկել է գնել նշված հողամասը: Համաձայնության արդյունքում նշված հողամասը վաճառել է նրան, սակայն չի հիշում, թե որքան գումարով: ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության նախկին պետ՝ Արման Սահակյանին և Երևանի նախկին քաղաքապետ՝ Տարոն Մարգարյանին ճանաչել է որպես նշված պաշտոնները նախկինում զբաղեցրած անձանց, իսկ Աջափնյակ վարչական շրջանի նախկին ղեկավար Արտավազդ Սարգսյանն իր մորաքրոջ որդու ընկերն է: Միաժամանակ նշել է, որ Հ. Բեկնազարյան փողոց 5/17 հասցեում գտնվող հողամասը աճուրդով ձեռք բերող Լևոն Հարությունյանին չի ճանաչում և չի կարող ասել, թե վերջինս ինչ պատճառով է նույնպես դիմում գրել, որ Բեկնազարյան փողոցի 5/17 հասցեի միասնական տեղեկանքը տրամադրվի Արմեն Սարգսյանին:

25. Վկա Զավեն Առաքելյանը ցուցմունքով հայտնել է, որ 2009 թվականի հունիսից մինչև 2019 թվականի մայիս ամիսը զբաղեցրել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի պաշտոնը: Իր ղեկավարած վարչությունը դպրոցների և նախադպրոցական ուսումնական հաստատության հողատարածքների չափագրման, որոշման նախապատրաստման, գլխավոր հատակագծերի կազմման գործընթացներին մասնակցություն չի ունեցել, դրանք կատարվել են անշարժ գույքի ու ճարտարապետության և քաղաքաշինության

վարչությունների կողմից: Նշել է, որ դպրոցների և նախադպրոցական ուսումնական հաստատության հողամասերի սահմանների ճշգրտման արդյունքում հողամասերի չափերի փոքրացումը պայմանավորված է եղել հողամասերի հետագա արդյունավետ կառավարումն ապահովելու անհրաժեշտությամբ, մինչդեռ՝ տվյալ դեպքում, Երևանի քաղաքապետի որոշումները չեն վերաբերվել հողերի արդյունավետ կառավարումն ապահովելուն և որևէ ձևով դրանք պատճառաբանված կամ հիմնավորված չեն եղել: Ավելին՝ Երևանի քաղաքապետի որոշումներով հողամասերի մակերեսների սահմանման համար հիմք են հանդիսացել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված եզրակացությունները, համաձայն որոնց՝ տարածքի տեղազննումից և տեղագրական հանույթի ճշգրտումից է պարզվել հողամասի փաստացի մակերեսը, այլ ոչ թե հողամասերի հետագա արդյունավետ կառավարումն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված է փոփոխվել և նվազեցվել հողամասերի մակերեսները:

26. Մեղադրյալ Արտավազդ Սարգսյանը վկայի դատավարական կարգավիճակով ցուցմունք է տվել այն մասին, որ 2012 թվականի մայիսի 22-ից մինչև 2018 թվականի նոյեմբերի 1-ը զբաղեցրել է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի պաշտոնը: 2013 թվականին Աջափնյակ վարչական շրջանի աշխատակազմ է ստացվել Երևանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանի կողմից ուղարկված գրությունը, որով խնդրվել է տալ պարզաբանում թիվ 185 դպրոցին հատկացված հողամասի մակերեսի չափի փոփոխության վերաբերյալ: Նշված գրության պահանջների կատարումն ապահովելու և պատասխան գրություն նախապատրաստելու գործընթացը հանձնարարել է քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ավետիս Ավագյանին: Ավետիս Ավագյանի կողմից նախապատրաստվել և իր կողմից պատասխան գրություն է ուղարկվել քաղաքապետարան, որ դպրոցի գլխավոր հատակագծում ընդգրկված է ստորգետնյա ավտոտնակների շարք և նշված հատվածը չի կարող ծառայել որպես դպրոցի սպասարկման տարածք, ուստի կատարված տեղազննման և տեղագրական ճշգրտված հանույթով այն չի ընդգրկվել դպրոցի զբաղեցրած տարածքի սահմաններում: Այնուհետև՝ 2014 թվականի ապրիլին, ճարտարապետության և հողօգտագործման բաժնի կողմից կազմվել են Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանին հասցեագրված թվով երեք գրություններ, որոնց համաձայն՝ մրցութային և աճուրդային հանձնաժողովին են ներկայացվել թիվ 185 դպրոցի հարակից տարածքում գտնվող և Երևան համայնքին պատկանող թվով 3 առանձին հողակտորների ելակետային տվյալները՝ հասարակական նշանակության օբյեկտ, ինչպես նաև բնակելի տներ կառուցելու համար՝ միաժամանակ հայտնելով, որ Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմն այդ հարցի կապակցությամբ առարկություն չունի: Հետագայում, երբ քաղաքապետարանից ստացել է կայացված աճուրդների վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը, տեղեկացել է, որ հողակտորներից մեկը՝ Բեկնազարյան փողոցի անմիջական հարակից հատվածում գտնվող, աճուրդով ձեռք է բերել իր մանկության ընկեր Հարություն Մելոյանը, ով այդ ժամանակ աշխատել է Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում՝

որպես բաժնի պետի տեղակալ, մյուս հողամասը ձեռք է բերել իրենց թաղամասի բնակիչ՝ Լևոն Հարությունյանը, ով իր իմանալով աշխատել է Արման Սահակյանի ղեկավարած՝ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունում, իսկ երրորդ հողակտորը ձեռք է բերել իր ընկեր Գեղամ Պետրոսյանի քեռու որդին: Արմեն Բունիաթյանին ճանաչում է, նա եղել է Երևանի քաղաքապետի օգնականը, Հրայր Ավագյանին ճանաչում է որպես իրենց թաղամասի բնակիչ, Տիգրան Սահակյանին ճանաչում է որպես Արման Սահակյանի եղբայր, Արթուր Հովակիմյանին ճանաչում է որպես Արման Սահակյանի վարորդ, իսկ Արմեն Սարգսյանն իր մորաքրոջ տղան է: Վերջերս է տեղեկացել, որ Տիգրան Սահակյանը, Հրայր Ավագյանը և Արմեն Բունիաթյանը տվյալ տարածքում հողատարածք և շինություն են գնել:

27. Մեղադրյալ Արմեն Սարգսյանը վկայի դատավարական կարգավիճակով ցուցմունք է տվել այն մասին, որ Կարեն Ունուսյանն իր մտերիմ ընկերն է: 2014 թվականին Կարեն Ունուսյանը հետաքրքրվել և տեղեկացել է, որ Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցում՝ թիվ 185 դպրոցի հարևանությամբ Երևանի քաղաքապետարանի կողմից աճուրդով հողատարածքներ են վաճառվում: Հողատարածքներից մեկի աճուրդին մասնակցելու համար Կարեն Ունուսյանը Երևանի քաղաքապետարան է ներկայացրել համապատասխան փաստաթղթեր և կատարել մուծումներ: Քանի որ մինչ աճուրդի կայանալը տեղեկացել է, որ բացի իրենից այլ անձ աճուրդին մասնակցելու հայտ չի ներկայացրել, իսկ աճուրդը կայանալու համար օրենքով պարտադիր է եղել առնվազն երկու քաղաքացու մասնակցություն, ուստի խնդրել է իրեն, որ ինքն էլ աճուրդին մասնակցելու հայտ ներկայացնի, որպեսզի աճուրդը կայանա: Սահմանված օրը և ժամին Երևանի քաղաքապետարանում ինքը և Կարեն Ունուսյանը մասնակցել են աճուրդին, աճուրդում հաղթող է ճանաչվել Կարեն Ունուսյանը և Երևանի քաղաքապետարանից ձեռք է բերել նշված հողատարածքը, որի կոնկրետ հասցեն, մակերեսը կամ մեկնարկային գինը ներկայումս չի հիշում: Անշարժ գույքի կադաստրում պետական գրանցումներ կատարելու համար Կարեն Ունուսյանի հետ գնացել են Կենտրոն սպասարկման գրասենյակ, և քանի որ վերջինս պետք է բացակայեր քաղաքից, ուստի դիմումում նշել է, որ համապատասխան փաստաթղթերը տրամադրեն իրեն: Դրանից հետո այդ հողատարածքի հետ այլևս որևէ առնչություն չի ունեցել, ինչքանով տեղյակ է, հետագայում Կարեն Ունուսյանը նշված հողատարածքը վաճառել է, իսկ թե ում և ինչ գնով է վաճառել՝ չի կարող ասել: Երևանի նախկին քաղաքապետ Տարոն Մարգարյանին և ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության նախկին պետ Արման Սահակյանին ճանաչել է որպես նշված պաշտոնները զբաղեցնող անձանց, նրանց հետ անձնական որևէ հարաբերություն չի ունեցել, իսկ Աջափնյակ համայնքի նախկին ղեկավար Արտավազդ Սարգսյանն իր մորաքրոջ որդին է: Լևոն Հարությունյանին ճանաչում է որպես իրենց թաղամասի բնակիչ, նրա հետ երբևէ մտերիմ հարաբերություններ չի ունեցել, քանի որ բավականին երկար ժամանակ է անցել, ուստի չի հիշում, թե ինչ պատճառով է Լևոն Հարությունյանը նույնպես անշարժ գույքի կադաստրի Կենտրոն սպասարկման գրասենյակում դիմում ներկայացրել և խնդրել, որ

Հ. Բեկնազարյան փողոցի 5/17 հասցեի վերաբերյալ միասնական տեղեկանքը տրամադրվի իրեն:

28. Վկա Սերոբ Կարապետյանը ցուցմունքով հայտնել է, որ Արմեն Բունիաթյանն իր մտերիմ ընկերն է: 2014 թվականի վերջերին Արմեն Բունիաթյանի առաջարկով միասին 2.500.000 ՀՀ դրամով ձեռք են բերել Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցում թիվ 185 դպրոցին հարակից գտնվող հողատարածքը, որը գրանցվել է Արմեն Բունիաթյանի անվամբ: Դրանից հետո նշված հողատարածքի վրա կառուցել են հասարակական շինություն, իսկ շինության չափերը, ձևը և արտաքին ձևավորումը համապատասխանեցրել են դրան կից կառուցվող մյուս շինությունների հետ: 2018 թվականի գարնանը, քանի որ Արմեն Բունիաթյանը պետք է մեկներ ՀՀ-ից, վերջինս հողատարածքը շինությունով նվիրատվության պայմանագրով հանձնել է իրեն, որպեսզի այդ շինության հետագա շահագործման հետ կապված բոլոր հարցերով զբաղվի ինքը, սակայն դրանից հետո մինչ օրս շինությունը չի օգտագործվել:

29. Մեղադրյալ Տիգրան Սահակյանը վկայի դատավարական կարգավիճակով ցուցմունք է տվել այն մասին, որ 2015 թվականին իրենց թաղամասի բնակիչ Սահակ Ռոզիկյանից մոտ 3.000.000 ՀՀ դրամով ձեռք է բերել Հ. Բեկնազարյան փողոցի 5/22 հասցեում գտնվող 250 քմ մակերեսով հողատարածք: Քանի որ այդ ժամանակ աշխատել է ՀՀ առողջապահության նախարարությունում որպես փոխնախարար և եղել է ծանրաբեռնված, ուստի փաստաթղթային բոլոր հարցերով զբաղվել է Սահակ Ռոզիկյանը: Հողամասը ձեռք բերելուց հետո, հավանաբար 2017 թվականին, դիմել է Երևանի քաղաքապետարան, ստացել է շին. թույլտվություն և նշված հողատարածքում կառուցել է հասարակական նշանակության շինություն: Շինության ընդհանուր չափը, տեսքը, կառուցվածքը համապատասխանեցրել են հարևանությամբ կառուցվող շինություններին, իր հիշելով հարևանությամբ կառուցվող շինությունները նույնպես կառուցվել են նույն շինարարական ընկերության կողմից, որպեսզի մեկ ընդհանուր կառույց ստացվի: Չի հիշում, թե իր կողմից անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ներկայացված դիմումներով ինչու է Ավետիս Ավագյանին լիազորել ստանալու անհրաժեշտ փաստաթղթերը, հնարավոր է վերջինս կամ իր ծանոթն է եղել կամ մեկ այլ անձի միջոցով է խնդրել, որ զբաղվի այդ հարցով: Նշել է, որ տեղյակ չի եղել, որ այդ հողատարածքը գտնվել է թիվ 185 դպրոցի տարածքում, տեղյակ չէ նաև, թե ինչ կարգով է այն առանձնացվել դպրոցի տարածքից և օտարվել, իսկ իր եղբայրը՝ Արման Սահակյանը, հողատարածքը ձեռք բերելու և շինարարությունը կատարելու գործընթացների հետ առնչություն չի ունեցել:

30. Վկա Էդուարդ Կովկասյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 1986 թվականից աշխատում է Երևանի թիվ 185 դպրոցում որպես տնտեսվար, ինչպես նաև ֆիզկուլտուրայի ուսուցիչ: Տեղյակ չի եղել և չի կարող հայտնել, թե ինչ կարգով են թիվ 185 դպրոցի տարածքից առանձնացվել և օտարվել այն հողատարածքները, որտեղ ներկայումս կառուցվել են բնակելի տներ և խանութներ, սակայն այն հողատարածքը, որտեղ կառուցվել են բնակելի տներ, նախկինում օգտագործվել է դպրոցի կողմից ֆիզկուլտուրայի ամառային դասընթացները կազմակերպելու համար, իսկ ճանապարհի

երկարությամբ ընկած տարածքը, որտեղ ներկայումս կառուցված են խանութներ, եղել է կանաչապատ, թեք գոտի: Իր մասնակցությամբ երբևէ դպրոցի տարածքի չափագրման աշխատանքներ չեն կատարվել, որևէ մեկին չի ուղեկցել դպրոցի տանիք չափագրման աշխատանքներ կատարելու նպատակով, դպրոցի տանիքի բանալին առկա է միայն իր և դպրոցի պահակ Ժոռա Մարտիրոսյանի մոտ, դպրոցի կին աշխատակիցներից որևէ մեկի մոտ այդ բանալին չի եղել: Եթե նույնիսկ պահակի կողմից էլ բացվեր տանիքի դուռը՝ ինքը կամ դպրոցի տնօրենն անպայման տեղյակ կլինեին: Բացի այդ, ինքը տեղյակ չի եղել, թե կոնկրետ որտեղով են անցնում դպրոցի սահմանները և դպրոցի տնօրենի կողմից, թեկուզ բանավոր, լիազորված չի եղել մատնացույց անելու դպրոցի սահմանները: Իր կարծիքով դպրոցի հողատարածքի հստակ սահմանները կարող էր մատնացույց անել միայն դպրոցի տնօրենը:

31. Վկա Էդուարդ Կովկասյանի և մեղադրյալ՝ Հայկ Պետրոսյանի միջև կատարվել է առերես հարցաքննություն, որի ընթացքում Էդուարդ Կովկասյանը հայտնել է, որ առհասարակ իր մասնակցությամբ դպրոցի զբաղեցրած հողատարածքում երբևէ չափագրում չի կատարվել, տեղյակ չէ և չի կարող ասել՝ դպրոցի տարածքում չափագրումներ կատարվել են, թե ոչ, ամեն դեպքում իրեն նման բան հայտնի չի եղել: Դպրոցի տանիքի դռները միշտ փակ են եղել բանալիներով, տանիքի մուտքի դռան բանալիները գտնվել են պահակ Ժոռա Մարտիրոսյանի մոտ, սակայն դպրոցի տանիք բարձրանալու համար, առավել ևս դրսից եկած անձին դպրոցի տանիք տանելու համար, անպայման տեղյակ են պահել դպրոցի տնօրենին, նոր միայն դրանից հետո թույլատրել են բարձրանալ դպրոցի տանիք: Նույնիսկ ինքը, որպես տնտեսվար, իրավունք չի ունեցել դրսից եկած անձին առանց դպրոցի տնօրենի թույլտվության թույլատրել բարձրանալ դպրոցի տանիք: Չի կարող ասել, թե ինչ կին աշխատակցի մասին է խոսքը, ամեն դեպքում որևէ կին աշխատակից ինքնագլուխ չէր կարող որևէ մեկին ուղեկցել դպրոցի տանիք, միաժամանակ անհասկանալի է, թե ինչու պետք է որևէ կին աշխատակից ուղեկցեր, այլ ոչ, թե տնտեսվարը կամ պահակը: Հայկ Պետրոսյանը, ի պատասխան Էդուարդ Կովկասյանի՝ հայտնել է, որ դպրոցի տարածքում կատարել է չափագրման աշխատանքներ, բարձրացել է դպրոցի տանիք, դպրոցի կին աշխատակցի ուղեկցությամբ բարձրացել է տանիք և կատարել չափագրում: Դրանից հետո այդ կին աշխատակիցը որևէ այլ գործողության չի մասնակցել, չի հիշում դպրոցի տարածքում չափագրումներ կատարելու ընթացքում իրեն որևէ մեկը ուղեկցել է, թե ոչ կամ որևէ մեկը դպրոցի սահմաններն իրեն մատնացույց արել է, թե ոչ:

32. Վկա Արմեն Բունիաթյանը ցուցմունքով հայտնել է, որ 2009 թվականից մինչ 2018 թվականը աշխատել է Երևանի քաղաքապետարանում որպես քաղաքապետի օգնական: 2014 թվականի վերջերին տեղեկանալով, որ Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցում, թիվ 185 դպրոցի հարակից տարածքում հողատարածք է վաճառվում, որոշել է գնել այն: Իր ընկեր Սերոբ Կարապետյանին առաջարկել է միասին գնել նշված հողատարածքը, վերջինս համաձայնել է իր առաջարկին և մոտ 2.500.000 ՀՀ դրամով ձեռք են բերել Հ. Բեկնազարյան փողոցի 5/20 հասցեում գտնվող հողամասը, որը գրանցվել է իր անվամբ: Դրանից հետո նշված հողատարածքի վրա կառուցել են

հասարակական շինություն, իսկ շինության չափերը, ձևը և արտաքին ձևավորումը համապատասխանեցրել են դրան կից կառուցվող մյուս շինությունների հետ: 2018 թվականի գարնանը, քանի որ ինքը պետք է մեկներ ՌԴ արտագնա աշխատանքների, հողատարածքը շինությունով նվիրատվության պայմանագրով հանձնել է Սերոբ Կարապետյանին, որպեսզի այդ շինության հետագա շահագործման հետ կապված բոլոր հարցերով զբաղվի նա: Նշված հողատարածքը ձեռք է բերել մի քաղաքացուց, ում նախկինում չի ճանաչել և հողատարածքի վաճառքի մասին տեղեկացել է հայտարարություններից:

33. Վկա Արտակ Մակարյանը ցուցմունքով հայտնել է, որ 2009 թվականից մինչ 2016 թվականը աշխատել է Երևանի Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնում, այնուհետև՝ մինչ 2018 թվականի դեկտեմբեր ամիսն աշխատել է նույն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի պաշտոնում: Հիշում է, որ մասնակցել է Ավան Բաբաջանյան փողոցում գտնվող հողատարածքի աճուրդին, սակայն աճուրդում չի հաղթել: Միաժամանակ նշել է, որ Բաբաջանյան փողոցի 8/2 հասցեում գտնվող հողամասի աճուրդի վերաբերյալ այլ մանրամասներ չի հիշում:

34. Վկա Կարեն Ռոստոմյանը ցուցմունքով հայտնել է, որ մոտ 8 տարի առաջ Երևանի քաղաքապետարանից աճուրդային կարգով, մոտ 21.000.000 ՀՀ դրամով, գնել է հողատարածք, որը գտնվել է Ավանի գլխավոր փողոցի վրա, ինչ-որ դպրոցի մոտ: Հողատարածքը գնել է, քանի որ այնտեղ եղել են ծառեր և ինքը ցանկացել է զբաղվել ծառերի մշակմամբ, սակայն հասկացել է, որ ծառերի մշակումը իր խելքի բանը չէ և ֆինանսական խնդիրներ են առաջացել, որոշել է այն վաճառել: Հողատարածքը բաժանել է 2 հավասար մասերի, որոնց տրվել են առանձին հասցեներ և մոտ 2 ամիս հետո այն վաճառել է իրեն անծանոթ 2 անձանց: Հողատարածքները վաճառել է յուրաքանչյուրը 13.000.000 ՀՀ դրամ գումարով, սակայն իր առաջարկությամբ պայմանագրերում յուրաքանչյուր հողամասի վաճառքի գինը նշվել է 4.000.000 ՀՀ դրամ, քանի որ չի ցանկացել պայմանագրերում նշել ամբողջական գումարը: Հողամասի աճուրդով վաճառքի մասին տեղեկացել է թերթից, սակայն չի հիշում, թե որ թերթից է տեղեկացել, դրանից հետո մինչ աճուրդը միայնակ է գնացել և տեսել է նշված հողամասը, իսկ ֆինանսական խնդիրների մասին չի ցանկացել հայտնել, նշելով, որ դրանք խիստ անձնական են: Այնուհետև՝ նշել է, որ հողատարածքները վաճառել է յուրաքանչյուրը 16.000.000 ՀՀ դրամով, սակայն տրված հարցերից հետո կրկին նշել է, որ հողամասերը վաճառել է յուրաքանչյուրը 13.000.000 դրամով, ընդհանուրը՝ 26.000.000 դրամով, այդ գումարներն իրեն վճարվել է առձեռն եղանակով, որևէ փաստաթուղթ չի կազմվել:

35. Մեղադրյալ Կարինե Նորեկյանը վկայի դատավարական կարգավիճակով ցուցմունք է տվել այն մասին, որ 2011 թվականի օգոստոսի 2-ից մինչև 2011 թվականի նոյեմբերի 23-ը հանդիսացել է Երևան քաղաքի Աճառյան փողոցի 40 հասցեում գտնվող «Թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատարը, իսկ դրանից հետո մինչ 2019 թվականի մայիսի 10-ը՝ նույն ՊՈԱԿ-ի տնօրենը: Դպրոցի հողատարածքից մաս

առանձնացնելու մասին ինքը տեղեկացված չի եղել, դրա հետ կապված որևէ քննարկման չի մասնակցել, դպրոցի հողատարածքի սահմանների փոփոխության մասին տեղեկացել է այն ժամանակ, երբ կաթսայատան կառուցման հանգամանքով պայմանավորված ստացել է դպրոցի նոր հատակագիծը և տեսել, որ դպրոցի սահմանները փոփոխվել են և դպրոցի տարածքից դուրս է մնացել այգու մի հատվածը, որն իր հիշելով կազմել է մոտ 3.000 քմ: Տեղյակ չի եղել և չի կարող ասել, թե նշված հողատարածքն ինչ նպատակով կամ ինչ հիմքերով է առանձնացվել դպրոցի տարածքից, իսկ նշված հանգամանքները պարզելու համար որևէ միջոց չի ձեռնարկել՝ մտածելով, որ վերադաս մարմինն է, հավանաբար, այդպես նպատակահարմար գտել: Դրանից ամիսներ անց, երբ ամուսնու՝ Լյուդվիգ Ասատրյանի հետ մեքենայով անցնելիս են եղել փողոցով՝ նկատել են, որ դպրոցի ցանկապատ պարսպի վրա փակցված է ցուցանակ, որ հողամասը վաճառվում է: Ամուսինը զանգահարել և պարզել է, որ այդ տարածքը վաճառվում է: Դրանից հետո ինքն այլևս այդ հարցերի հետ չի առնչվել, ամուսինն է հետաքրքրվել և գնել այդ հողատարածքի մի մասը, սակայն տեղյակ չէ և չի կարող ասել, թե ամուսինն ումից, ինչ գնով և որքան տարածք է գնել, միայն գիտի, որ այդ հողատարածքի մի մասը գնել է ամուսինը՝ Լյուդվիգ Ասատրյանը:

36. Մեղադրյալ Արա Ճորուխյանը վկայի դատավարական կարգավիճակով ցուցմունք է տվել այն մասին, որ 2009 թվականից մինչև 2018 թվականի հոկտեմբերն աշխատել է Երևանի քաղաքապետարանում, 2009-ից մինչ 2011 թվականը զբաղեցրել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչության գլխավոր մասնագետի պաշտոնը, այնուհետև՝ մինչ 2017 թվականը, զբաղեցրել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության տարածքային 3-րդ բաժնի պետի պաշտոնը, որից հետո՝ մինչ 2018 թվականը, հասարակական կարգի պահպանության ծառայության պետի պաշտոնը: 2012 թվականին ձեռք է բերել Երևան քաղաքի Մ. Բաբաջանյան փողոց 8/3 հասցեում գտնվող 1798 քմ մակերեսով հողատարածքը, որի մասին տեղեկացել է իրենց շենքի համատիրության նախագահ Անդրանիկ Վարդանյանից, սակայն վերջինս մոտ 5 տարի առաջ մահացել է: Չնայած նրան, որ հողամասի առուվաճառքի պայմանագրում հողամասի վաճառքի գինը նշված է 4.000.000 ՀՀ դրամ, սակայն հողամասի ձեռք բերման համար վաճառողին կանխիկ առձեռն եղանակով վճարել է մոտ 35.000 կամ 36.000 ԱՄՆ դոլար, իսկ գումարի վճարման վերաբերյալ որևէ փաստաթուղթ չի կազմվել: Մինչ հողատարածքի ձեռք բերելը տեսել է հողամասը, այն գտնվել է Բաբաջանյան փողոցի վրա, առաջին գծում, ցանկապատված տարածքում, որտեղ եղել են նաև մրգատու ծառեր: Հավանել է հողատարածքը և որոշել է այն գնել: Բացի նշված հողամասից, ժամանակի ընթացում, ինչպես աճուրդային եղանակով, այնպես էլ այլ անձանցից ձեռք է բերել այլ հողատարածքներ, որոնց մեծ մասն օտարել է: Ներկայումս ունի նաև երկու հատ հասարակական շինություններ, մեկ հատ մետաղական տաղավար, որի մի մասը պատկանում է իրեն, իսկ մյուս մասը պատկանում է իր ընկեր՝ Արտակ Մակարյանին: Երևանի նախկին քաղաքապետ Տարոն Մարգարյանը հանդիսանում է իր հարսանիքի քավորը, վերջինիս հետ մինչ այդ ունեցել է մոտ հարաբերություններ,

սակայն նրանցից կամ Երևանի քաղաքապետարանի համապատասխան պաշտոնատար անձանցից չի փորձել պարզել, թե ինչ հիմքերով է Երևան քաղաքի Աճառյան 40 հասցեում գտնվող «Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից զբաղեցրած հողատարածքից առանձնացվել և օտարվել 3569,8 քմ մակերեսով հողատարածքը:

37. Մեղադրյալ Լյուդվիգ Ասատրյանը վկայի դատավարական կարգավիճակով ցուցմունք է տվել այն մասին, որ 2005 թվականից մինչ օրս աշխատում է ՀՀ արդարադատության նախարարությունում, իսկ 2016 թվականից զբաղեցնում է ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Արագածոտնի մարզային մարմնի պետի պաշտոնը: Երևան քաղաքի Բաբաջանյան փողոց 8/2 հասցեում գտնվող հողամասի վաճառքի մասին տեղեկացել է պատահաբար, կնոջ՝ Կարինե Նորեկյանի հետ ավտոմեքենայով փողոցով անցնելիս դպրոցի ցանկապատ պարսպի վրա նկատել են փակցված ցուցանակ, որ այն վաճառվում է: Ցուցանակի վրա նշված հեռախոսահամարով զանգահարել է, վաճառողը ներկայացել է Կարեն անունով և ասել, որ հողատարածքն ինքը գնել է մոտ մեկ ամիս առաջ պետությունից, սակայն որոշել է այն վաճառել: Դրանից մեկ կամ երկու օր հետո զանգահարել է Կարենին, վերջինիցս հետաքրքրվել է, թե նա այդ հողատարածքի մի մասը վաճառում է, թե ոչ, սակայն նա պատասխանել է, որ կես-կես չի վաճառում, եթե մյուս կեսն էլ ցանկացող լինի այդ դեպքում կվաճառի: Դրանից հետո Կարենն ասել է, որ մի կեսը նույնպես ցանկացող կա և եթե ինքն էլ է ցանկանում մյուս կեսը գնել, կարող են պայմանավորվել: Համաձայնել է Կարենի առաջարկին և Բաբաջանյան փողոց 8/2 հասցեում գտնվող 1798,4 քմ. մակերեսով հողամասը ձեռք է բերել մոտ 14.000.000 ՀՀ դրամով, հստակ գումարի չափը չի հիշում: Չի կարող ասել, թե ինչու է պայմանագրում հողամասի վաճառքի գինը նշվել 3.000.000 ՀՀ դրամ, սակայն հողամասի համար առձեռն վճարել է մոտ 14.000.000 ՀՀ դրամ, իսկ գումարը վճարելու վերաբերյալ որևէ փաստաթուղթ չի կազմվել: Չնայած նրան, որ կինը՝ Կարինե Նորեկյանը, նշված ժամանակահատվածում հանդիսացել է Երևան քաղաքի Աճառյան փողոց 40 հասցեում գտնվող «Թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենը և այդ հողատարածքը հանդիսացել է նշված դպրոցի տարածք, կնոջից կամ կնոջ միջոցով չի փորձել պարզել, թե ինչ հիմքերով կամ հիմնավորումներով է դպրոցի զբաղեցրած հողատարածքից առանձնացվել և օտարվել նշված հողատարածքը:

38. Մեղադրյալ Արմինե Իսրաելյանը վկայի դատավարական կարգավիճակով ցուցմունք է տվել այն մասին, որ 2012 թվականից հանդիսանում է Երևան քաղաքի Ավանեսովի փողոցի 12 հասցեում գտնվող թիվ 64 մանկապարտեզի տնօրենը: Տնօրեն դառնալուց հետո հայրը՝ Սասունիկ Իսրայելյանը, ասել է, որ ցանկանում է մանկապարտեզին պատկանող չօգտագործվող հողատարածքի հատվածը, որը հարակից է իրենց խանութներին, գնել և մեծացնել խանութների տարածքը: Նրան պատասխանել է, որ իրենից ինչ կախված է ինքը կանի: Դրանից հետո գնացել է Էրեբունի վարչական շրջան և Երևանի քաղաքապետարան, ստորագրել հողատարածքի վերաբերյալ փաստաթղթեր: Տեղյակ է եղել, որ մանկապարտեզի զբաղեցրած հողատարածքը պակասել է, քանի որ այդ մասին զրուցել է հոր հետ և իմացել է, որ մանկապարտեզի հողատարածքից առանձնացված հողամասը 2012 թվականին

սեփականաշնորհել է հայրը: Դրանից հետո՝ 2014 թվականին, կրկին դիմում է ներկայացրել Էրեբունու թաղապետարան՝ մանկապարտեզի հողատարածքը կրկին վերաչափագրելու նպատակով, որի իմաստը կրկին կայացել է նրանում, որ հայրը ցանկացել է ավելացնել հողատարածքի չափերը և մեծացնել խանութների տարածքը: Նույն եղանակով հայրը կրկին սեփականաշնորհել է մանկապարտեզի հողատարածքի մի մասը: Իր դերակատարումը այդ ամենում եղել է այն, որ հոր ասելով ներկայացել է պետական հիմնարկներ, որքանով հիշում է՝ թաղապետարան, կադաստր և ստորագրել ինչ-որ փաստաթղթեր, դրանից ավելին ոչինչ հայտնել չի կարող:

39. Մեղադրյալ Սասունիկ Իսրայելյանը վկայի դատավարական կարգավիճակով ցուցմունք է տվել այն մասին, որ Երևան քաղաքի Ավանեսով փողոցում գտնվող թիվ 64 մանկապարտեզի հարևանությամբ ունի առևտրի սրահ, որը տեղակայված է Տիտոգրադյան փողոցում: Կրպակաշարը ընդլայնելու համար ուսումնասիրել է տեղանքը և դրա հետնամասի հողատարածքը, որը պատկանել է մանկապարտեզին և չի օգտագործվել, ցանկացել է դրա մի մասը սեփականաշնորհել: 2012 թվականին դիմում է ներկայացրել Էրեբունու թաղապետարան՝ մանկապարտեզից որոշակի տարածք գնելու համար: Դիմումից հետո քաղաքապետարանում իրականացվել է նշված տարածքի աճուրդ, մասնակցել և հաղթել է այդ աճուրդում, սակայն գումարի չափը չի հիշում: Տարածքը աճուրդով ձեռք բերելուց հետո նշված հողատարածքում որևէ շինարարություն չի կատարել: 2014 թվականին կրկին իր դիմումի հիման վրա քաղաքապետարանում տեղի ունեցած աճուրդի արդյունքներով, նույն մանկապարտեզի հողատարածքից, ձեռք է բերել նույն չափի հողատարածք, որը եղել է նախորդ հողատարածքի շարունակությունը: Բացի պետական վճարներից ավել գումար ոչ ոքի չի տվել: Միաժամանակ նշել է, որ Երևանի նախկին քաղաքապետ Տարոն Մարգարյանի հոր՝ Անդրանիկ Մարգարյանի հետ ունեցել է մտերիմ, ջերմ փոխհարաբերություններ, և միգուցե Տարոն Մարգարյանը նկատել է, որ իր դիմումն է և ընթաց է տվել իր դիմումին, քանի որ վերջինիս հետ էլ է ունեցել նորմալ հարաբերություններ: Իր դստեր՝ Արմինե Իսրայելյանի կողմից հողատարածքների վերաբերյալ գործողությունները կատարվել են իր ասելով, այսինքն՝ դիմում ներկայացրել և փաստաթղթերի տակ ստորագրել է իր ասելով:

40. Վկա Արմեն Հարությունյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2008 թվականից մինչ 2017 թվականը զբաղեցրել է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի պաշտոնը: 2012 թվականին Էրեբունի վարչական շրջանի Ավանեսով փողոցի 12 հասցում գտնվող թիվ 64 մանկապարտեզի տնօրեն է նշանակել Արմեն Իսրայելյանի քրոջը՝ Արմինե Սասունի Իսրայելյանին: Արմինե Իսրայելյանին մանկապարտեզի տնօրեն նշանակելուց հետո, իր հիշելով, վերջինս գրավոր դիմել է իրեն, որպեսզի վերաճշտվեն մանկապարտեզի հողամասի սահմանները: Արմինե Իսրայելյանի դիմումի համաձայն՝ 2012 թվականի սեպտեմբերի 14-ին գրություն է ուղարկել Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին՝ խնդրելով կարիքն առաջանալու կապակցությամբ հանձնարարել համապատասխան վարչությանը կատարելու հիշյալ հասցեի սահմանների ճշտում: Ուղարկած գրությունից հետո կատարվել են

գեոդեզիական չափագրումներ, սակայն դրա արդյունքների մասին որևէ տեղեկություն չի ունեցել, այդ թվում նաև այն, որ մանկապարտեզի հողատարածքից մոտ 580 քմ մակերեսով հողատարածք է առանձնացվել և ներկայացվել աճուրդի: Դրանից հետո՝ 2014 թվականին, Արմինե Իսրայելյանը կրկին դիմում է ներկայացրել մանկապարտեզի տարածքի չափագրման խնդրանքով, որն իր կողմից չի մերժվել, և ինքը կրկին համապատասխան գրություն է ուղարկել քաղաքապետարան: Կարծել է, որ մանկապարտեզի տնօրեն Արմինե Իսրայելյանը պարզել է, որ քաղաքաշինական իրադրություն է փոխվել կամ նախկին չափագրման ընթացքում են սխալներ թույլ տրվել և նա ցանկանում է շտկել այն, այդ իսկ պատճառով 2-րդ դիմումն է ուղարկել: Ինչպես 2012 թվականին, այնպես էլ 2014 թվականին մանկապարտեզի սահմանների չափագրման արդյունքում հողամասի մակերեսի նվազման, հետագայում այդ հողատարածքները աճուրդով վաճառելու մանրամասներին չի տիրապետել: Չի պարզել, թե ինչու է պակասել մանկապարտեզի հողամասի մակերեսը, քանի որ գործընթացն իրականացվել է քաղաքապետարանի կողմից, այդ հողատարածքները Սասունիկ Իսրայելյանի կողմից աճուրդով գնելու մասին տեղեկացել է 2015 թվականին՝ մասնավոր զրույցներից, իսկ դրանից հետո էլ գործարքի օրինականությունը և հանգամանքները պարզելու ուղղությամբ միջոցներ չի ձեռնարկել, քանի որ այն իրականացվել է քաղաքապետարանի կողմից:

41. Վկա Վիգեն Մելյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Սասունիկ Իսրայելյանին ճանաչում է 1973 թվականից, վերջինիս հետ գտնվում է մտերիմ հարաբերությունների մեջ, նա հանդիսանում է իր դստեր կնունքի քավորը: Տիտոգրադյան փողոցի 17/1 հասցեում գտնվող հողամասի աճուրդին մասնակցել է Սասունիկ Իսրայելյանի առաջարկով, քանի որ վերջինս ասել է, որ աճուրդը լինելու համար իր հետ պետք է մասնակցի ևս մեկ անձ: Իրեն նշված հողատարածքը անհրաժեշտ չի եղել, ուղղակի Սասունիկ Իսրայելյանի առաջարկով ընդամենը նրա հետ մասնակցել է այդ աճուրդին, իսկ աճուրդում հաղթող է ճանաչվել Սասունիկ Իսրայելյանը: Աճուրդի վերաբերյալ այլ մանրամասներ չի հիշում:

42. ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից առգրավված՝ «Հ. Բեկնազարյան 5» հասցեի թիվ 185 դպրոցի, Հ. Բեկնազարյան փողոցի թիվ 5/2 հողամասի կադաստրային գործերի զննությամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետի 2002 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 2446-Ա որոշման համաձայն՝ Հ. Բեկնազարյան 5 հասցեում գտնվող թիվ 185 դպրոցի զբաղեցրած հողատարածքը՝ 15.523,0 քմ մակերեսով անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրվել է նշված դպրոցին: Երևանի քաղաքապետի 2014 թվականի փետրվարի 3-ի թիվ 284-Ա որոշման համաձայն՝ Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան 5 հասցեում գտնվող «Թիվ 185 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զբաղեցրած հողամասի փաստացի մակերեսը սահմանվել է 11.671,57 քմ: Բեկնազարյան փողոց 5/2 հասցեում գտնվող 1.333,25 քմ մակերեսով հողամասը 13.999.125 ՀՀ դրամով աճուրդային եղանակով ձեռք է բերել Հարություն Մելոյանը: Բաժանման սխեմայով Բեկնազարյան փողոցի 5/2 հողամասից առանձնացված 633,25 քմ մակերեսով հողամասը Հարություն Մելոյանը

10.000.000 ՀՀ դրամով վաճառել է Սահակ Ռոզիկյանին: Սահակ Ռոզիկյանի պատվիրմամբ Հ. Բեկնազարյան 5/2 հասցեով հողամասը բաժանվել է երեք մասի:

43. ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից առգրավված Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցի թիվ 5/17 հողամասի, 5/17 տան և 5/18 հողամասի կադաստրային գործերի զննությամբ պարզվել է, որ Երևանի Աջափնյակ համայնքի Բեկնազարյան փողոցի 5/17 հասցեում գտնվող 1.138,76 քմ մակերեսով հողամասը 7.174.188 ՀՀ դրամով աճուրդային եղանակով ձեռք է բերել Լևոն Հարությունյանը: 2015 թվականի մարտի 20-ի հողամասի առուվաճառքի մասին պայմանագրով Լևոն Հարությունյանն Էդգար Մկրտչյանին է վաճառել Հ. Բեկնազարյան փողոցի 5/17 հասցեում գտնվող 1.138,76 քմ մակերեսով հողամասը՝ 15.000.000 ՀՀ դրամով: Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցի 5/18 հասցեում գտնվող 1.092,85 քմ մակերեսով հողամասը 6.884.955 ՀՀ դրամով աճուրդային եղանակով ձեռք է բերել Կարեն Ունուսյանը: 2014 թվականի հոկտեմբերի 7-ին հողամասի առուվաճառքի մասին պայմանագրով Կարեն Ունուսյանը Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցի 5/18 հասցեում գտնվող 1.092,85 քմ մակերեսով հողամասը 5.000.000 ՀՀ դրամով վաճառել է Հրայր Ավագյանին:

44. ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից առգրավված Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցի թիվ 5/19, 5/20, 5/21, 5/22, 5/23, 5/24 և 5/29 հողամասի կադաստրային գործերի զննությամբ պարզվել է, որ Հարություն Մելոյանին սեփականության իրավունքով պատկանող Բեկնազարյան փողոցի 5/2 հասցեում գտնվող հողամասի առանձնացվող մասին, ըստ բաժանման հատակագծի, նախնական տրամադրվել է հասցե՝ Բեկնազարյան փողոց 5/20, որի մակերեսը կազմել է՝ 0.025 հա: 2014 թվականի հոկտեմբերի 23-ի հողամասի առուվաճառքի մասին պայմանագրով Հարություն Մելոյանը Արմեն Բունիաթյանին է վաճառել Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցի 5/20 հասցեում գտնվող 0.025 հա մակերեսով հողամասը՝ 2.500.000 ՀՀ դրամով: 2018 թվականի մարտի 29-ի անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով Արմեն Բունիաթյանը Սերոբ Կարապետյանի սեփականությանն է անհատույց հանձնել Հ. Բեկնազարյան փողոցի 5/20 հասցեում գտնվող անշարժ գույքը: Սերոբ Կարապետյանի և Վրեժ Արմոյանի միջև 2021 թվականի հոկտեմբերի 8-ին կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, համաձայն որի՝ վաճառող Սերոբ Կարապետյանը Երևան քաղաքի Հ.Բեկնազարյան փողոցի 5/20 հասցեում գտնվող անշարժ գույքը 40.000.000 ՀՀ դրամով վաճառել է գնորդ Վրեժ Արմոյանին: Սահակ Ռոզիկյանին սեփականության իրավունքով պատկանող Բեկնազարյան փողոցի 5/2 հասցեում գտնվող հողամասի բաժանման հատակագծով առանձնացվող մասին տրամադրվել է հասցե՝ Բեկնազարյան փողոց 5/21, որի մակերեսը կազմել է՝ 0.025հա: Սահակ Ռոզիկյանի կողմից ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արաբկիր սպասարկման գրասենյակ ներկայացված՝ իրավունքի պետական գրանցում կատարելու մասին դիմումում նշվել է, որ փաստաթուղթը տրամադրվի Ավետիս Ավագյանին: Սահակ Ռոզիկյանին սեփականության իրավունքով պատկանող Բեկնազարյան փողոցի 5/2 հասցեում գտնվող հողամասի բաժանման

հատակագծով առանձնացվող մասին տրամադրվել է հասցե՝ Բեկնազարյան փողոց 5/22, որի մակերեսը կազմել է 0.025 հա: 2015 թվականի հունիսի 4-ի հողամասի առուվաճառքի պայմանագրով Սահակ Ռոզիկյանը Տիգրան Սահակյանին է վաճառել Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցի 5/22 հասցեում գտնվող 0.025 հա մակերեսով հողամասը՝ 2.750.000 ՀՀ դրամով: Տիգրան Սահակյանի կողմից ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արաբկիր սպասարկման գրասենյակ ներկայացված՝ իրավունքի պետական գրանցում կատարելու մասին դիմումում նշվել է, որ փաստաթուղթը տրամադրվի Ավետիս Ավագյանին:

45. ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ստացված Երևան քաղաքի Տիտոգրադյան փողոցի N 17/1 հողամասի կադաստրային գործի զննությամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի՝ 2013 թվականի հունվարի 13-ի՝ «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու մասին» թիվ 69-Ա որոշմամբ Տիտոգրադյան փողոցի 17/1 հասցեում գտնվող, 575 քմ մակերեսով հողամասը՝ 5.175.000 ՀՀ դրամ մեկնարկային գնով ներկայացվել է աճուրդի: Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովի՝ 2013 թվականի փետրվարի 15-ին տեղի ունեցած նիստի թիվ 1 արձանագրության համաձայն՝ Տիտոգրադյան փողոցի 17/1 հասցեում գտնվող, 575 քմ մակերեսով հողամասի աճուրդում հաղթող է ճանաչվել Սասունիկ Իսրայելյանը: Երևանի քաղաքապետի՝ 2013 թվականի փետրվարի 22-ի N 710 որոշմամբ նշված աճուրդային վաճառքի արդյունքները հաստատվել են: Այնուհետև՝ 2013 թվականի փետրվարի 26-ին Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի և Սասունիկ Իսրայելյանի միջև կնքվել է հողամասի առուվաճառքի պայմանագիր, համաձայն որի՝ նշված գույքը օտարվել է 5.433.800 ՀՀ դրամով:

Երևանի քաղաքապետի՝ 2013 թվականի մարտի 21-ի N 1177-Ա որոշմամբ Երևան քաղաքի Տիտոգրադյան փողոցի 17/1 հասցեում գտնվող հողամասը միացվել է Սասունիկ Իսրայելյանին պատկանող մեկ այլ՝ Երևան քաղաքի Տիտոգրադյան փողոցի 17 հասցեում գտնվող, 0.042909 հա մակերեսով հողամասին:

46. ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ստացված Երևան քաղաքի Տիտոգրադյան փողոցի N 17/3 հողամասի կադաստրային գործի զննությամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 15-ի՝ «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու մասին» թիվ 85-Ա որոշմամբ Տիտոգրադյան փողոցի 17/3 հասցեում գտնվող, 863,34 քմ մակերեսով հողամասը՝ 8.040.060 ՀՀ դրամ մեկնարկային գնով ներկայացվել է աճուրդի: Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովի՝ 2014 թվականի նոյեմբերի 14-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Տիտոգրադյան փողոցի 17/3 հասցեում գտնվող, 863,34 քմ մակերեսով հողամասի աճուրդում հաղթող է ճանաչվել Սասունիկ Իսրայելյանը: 2014 թվականի նոյեմբերի 24-ին

Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի կողմից կայացվել է «2014 թվականի նոյեմբերի 14-ին կայացած՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդային վաճառքի հաղթողներին հողամասեր տրամադրելու և հողամասերի օտարման պայմանագրեր կնքելու մասին» թիվ 4407-Ա որոշումը: 2014 թվականի նոյեմբերի 27-ին Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի և Սասունիկ Իսրայելյանի միջև կնքվել է հողամասի առուվաճառքի պայմանագիր, համաձայն որի՝ Տիտոգրադյան փողոցի 17/3 հասցեում գտնվող, 863,34 քմ մակերեսով հողամասը 8.442.063 ՀՀ դրամով օտարվել է Սասունիկ Իսրայելյանին:

Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ 495-Ա որոշմամբ Սասունիկ Իսրայելյանին սեփականության իրավունքով պատկանող Տիտոգրադյան փողոցի 17/3 հասցեում գտնվող հողամասը միացվել է Սասունիկ Իսրայելյանին պատկանող մեկ այլ՝ Երևան քաղաքի Տիտոգրադյան փողոցի 17 հասցեում գտնվող, 0.100409 հա մակերեսով հողամասին:

47. ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ստացված Երևան քաղաքի Մ.Բաբաջանյան փողոցի 8/2 և Երևան քաղաքի Մ.Բաբաջանյան փողոցի 8/3 հողամասերի կադաստրային գործի զննությամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովի՝ 2012 թվականի օգոստոսի 13-ի նիստում արձանագրվել է, որ Երևան քաղաքի Մ. Բաբաջանյան փողոցի 8/2 հասցեում գտնվող, 3.596,80 քմ մակերեսով հողամասի աճուրդային վաճառքի հաղթող (գնորդ) է ճանաչվել Կարեն Ռոստոմյանը, ով հիշյալ հողամասի համար առաջարկել է առավելագույն գինը՝ 22.659.840 ՀՀ դրամ: Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը 2012 թվականի օգոստոսի 17-ի կայացրել է «Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի 2012 թվականի օգոստոսի 13-ին կայացած աճուրդային վաճառքի արդյունքները հաստատելու մասին» թիվ 5832-Ա որոշումը: 2012 թվականի օգոստոսի 20-ին Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի և Կարեն Ռոստոմյանի միջև կնքվել է հողամասի առուվաճառքի մասին թիվ 70/5-ԱԳ պայմանագիրը, համաձայն որի՝ Կարեն Ռոստոմյանը 22.659.840 ՀՀ դրամով ձեռք է բերել Երևան քաղաքի Մ. Բաբաջանյան փողոցի 8/2 հասցեում գտնվող, 3.596,8 քմ մակերեսով հողամասը: Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում 2012 թվականի օգոստոսի 27-ին կատարված՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համաձայն՝ Երևան քաղաքի Բաբաջանյան փողոցի 8/2 հասցեում գտնվող, 0.35968 հա մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Կարեն Ռոստոմյանին:

Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի՝ 2012 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 6223-Ա որոշմամբ Կարեն Ռոստոմյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Մ.Բաբաջանյան փողոցի թիվ 8/2 հասցեում գտնվող հողամասը բաժանվել է և բաժանման հատակագծով առանձնացվող մասին տրամադրվել է Մ. Բաբաջանյան փողոցի 8/3 հասցեն:

2012 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված՝ «Անշարժ գույքի վաճառքի պայմանագրով» վաճառող Կարեն Ռոստոմյանը Երևան քաղաքի Մ.Բաբաջանյան փողոցի 8/3 հասցեում գտնվող, 0.17984 հա մակերեսով հողամասը 4.000.000 ՀՀ դրամով վաճառել է գնորդ Արա Ճորուխյանին:

2012 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված՝ «Անշարժ գույքի վաճառքի պայմանագրով» վաճառող Կարեն Ռոստոմյանը Երևան քաղաքի Մ.Բաբաջանյան փողոցի 8/2 հասցեում գտնվող, 0.17984 հա մակերեսով հողամասը 3.000.000 ՀՀ դրամով վաճառել է գնորդ Լյուդվիգ Ասատրյանին:

Ներկայումս Լյուդվիգ Ասատրյանը և Արա Ճորուխյանը հանդիսանում են հիշյալ հողամասերի սեփականատերերը:

48. Ամբաստանյալ Արամ Ենգոյանի միջնորդության հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի մայիսի 10-ի թիվ ՀԿԴ/0051/01/23 որոշմամբ վերջինիս նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

49. Ամբաստանյալներ Հայկ Կյուրեղյանի և Միքայել Հակոբյանի միջնորդությունների հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ ՀԿԴ/0051/01/23 որոշմամբ Հայկ Կյուրեղյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով և 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ Միքայել Հակոբյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

50. Ամբաստանյալ Հայկ Պետրոսյանի միջնորդության հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ ՀԿԴ/0051/01/23 որոշմամբ վերջինիս նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

51. Ամբաստանյալ Տիգրան Փոթիկյանի միջնորդության հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ ՀԿԴ/0051/01/23 որոշմամբ վերջինիս նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

52. Ամբաստանյալներ Արման Սահակյանի, Տարոն Մարգարյանի, Անդրանիկ Քասարյանի միջնորդությունների հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի փետրվարի 4-ի թիվ ՀԿԴ/0051/01/23 որոշմամբ Արման Սահակյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, Տարոն Մարգարյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (3 դրվագ), Անդրանիկ Քասարյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (4 դրվագ) և 314-րդ հոդվածի 1-ին մասով (4 դրվագ) քրեական հետապնդումը դադարեցվել է՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

53. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ/0173/07/21 որոշման հիման վրա ՀՀ կենտրոնական բանկից առգրավված Արման Սահակյանի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների զննությամբ պարզվել է, որ Լևոն Հարությունյանը (ըստ քրեական գործով առկա տվյալների՝ Լևոն Հարությունյանը հանդիսացել է Արման Սահակյանի օգնականը, վերջինս աճուրդի արդյունքներով՝ Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցի 5/17 հասցեի 1.138,76քմ մակերեսով հողամասը 2014 թվականի հուլիսի 23-ին կնքված առուվաճառքի պայմանագրով՝ 7.174.188 ՀՀ դրամով, ձեռք բերելուց հետո՝ 2015 թվականի մարտի 20-ին՝ 15.000.000 ՀՀ դրամով վաճառել է Էդգար Մկրտչյանին) 2015 թվականի ապրիլի 1-ին Արման Սահակյանի «Արդշինբանկ» ՓԲԸ-ում առկա բանկային հաշվին կատարել է 34.905.000 ՀՀ դրամի դրամային մուտք՝ վարկային պարտավորությունների մարման համար:

54. Դատաշինարարատեխնիկական փորձաքննության թիվ 18-1801 եզրակացությամբ արձանագրված է.

«(...)

Ներկայիս թիվ 185 դպրոցը հանդիսանում է աշակերտների 1000 սահմանային թվով հիմնական դպրոց, որին ըստ ներկայիս գործող ՀՀՇՆ 2.07.01-89-ի «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» նորմի պետք է հատկացվեր 33քմ × 1000 աշակերտ = 33.000քմ (3.3 հա) մակերեսով հողամաս, ինչը հողամասի մակերեսի նորմերով թույլատրելի 20%-ի փոքրացման դեպքում կարող էր կազմել 26400քմ (2.64հա): Այսինքն՝ Երևանի քաղաքապետի 02.12.2002թ-ի թիվ 2446-Ա որոշումով դպրոցին տրամադրված (դպրոցի զբաղեցրած (15523.0քմ/1.5523հա) հողամասի մակերեսը սահմանված նվազագույն նորմերից արդեն քիչ էր 1.09 հա-ով:

(...)

Պետական սեփականություն հանդիսացող, դպրոցապատկան հողամասի վրա կառուցվել են ավտոտնակներ, ինչով խախտվել են պետության՝ ի դեմս դպրոցի,

իրավունքները և պաշտոնատար անձինք, որոնք ի պաշտոնե պարտավոր էին պաշտպանել այդ իրավունքները և պահանջել ինքնակամ կառույցի ապամոնտաժումը՝ խախտելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթները, ինչպես նաև «Կրթության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 4-րդ կետի՝ «Պետական ուսումնական հաստատությունների գույքն օտարվելու դեպքում կարող է օգտագործվել միայն ուսումնական նպատակներով» պահանջը, առաջարկվել է և ոչ ուսումնական նպատակների համար օտարվել ինքնակամ կառույցներով ծանրաբեռնված հողատարածքը, միաժամանակ, անհասկանալի ձևակերպմամբ՝ «Տարածքի տեղազննումից և տեղագրական հանույթի վերաճշգրտումից պարզվել է, որ վերոհիշյալ հասցեում գտնվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 11.671,57քմ», օտարվում են ավտոտնակների հետ որևէ կապ չունեցող, միմյանցից անջատ, դպրոցապատկան հողամասի ևս երկու հողակտոր, առանց հաշվի առնելու գործող ՀՀՇՆ 2.07.01-89-ի «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» նորմի պահանջը՝ դպրոցին տրամադրված հողամասի մակերեսի սահմանված նվազագույն նորմի վերաբերյալ:

(...)

Միևնույն ժամանակ կարևոր է արձանագրել, որ Հ. Բեկնազարյան փողոցից դեպի դպրոց տանող ավտոճանապարհի ձախակողմյան հատվածի (145.478 քմ) հողատարածքի օտարման հետևանքն այն է, որ մինչև հողատարածքի օտարելը դպրոցի տարածք էին մտնում միայն դպրոցը սպասարկող ավտոմեքենաները՝ գոյություն ունեին դեպի դպրոց տանող ճանապարհը փակող մետաղական ցածր դարպասներ: Ներկայումս, դպրոցին կից բնակելի տներն ունեն մուտք դեպի դպրոցի տարածք, ավելին՝ նշված սեփական բնակելի տները սպասարկող ավտոճանապարհը փաստացի հանդիսանում է դպրոցի բակի հատված, որն անթույլատրելի է և վտանգավոր երեխաների համար: Ըստ ՀՀՇՆ 31-03.01-2014 նորմի VI գլխի 25-րդ կետի՝ «Հանրակրթական հաստատությունների հողամասերի սահմանից մինչև բնակելի շենքերն ու օժանդակ շինությունները ... ընդունել հակահրդեհային, ... նորմատիվ պահանջներով՝ բայց ոչ պակաս 10 մ.. », ըստ ՀՀՇՆ 31-03.01-2014 նորմի VI գլխի 41-րդ կետի՝ «...հանրակրթական հաստատությունների տարածքներն իրենց ողջ պարագծով պետք է ցանկապատված լինեն առնվազն 1.5 մ բարձրությամբ ցանկապատով...»:

(...)

Փորձագիտական հետազոտության ընթացքում պարզվել է, որ ավտոկայանատեղին վերգետնյա է և/կամ մասամբ վերգետնյա:

Ըստ «ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմի՝ ավտոկայանատեղիի նվազագույն հեռավորությունը դպրոցի սահմանից պետք է կազմի 25 մ: Տվյալ հեռավորությունը հողամասի օտարումից հետո կազմում է 8,5 մ, այսինքն՝ նույնիսկ հողամասի օտարման պայմաններում չի պահպանվել նորմի պահանջը»:

55. Դատաշինարարատեխնիկական փորձաքննության թիվ 18-1465 եզրակացությամբ արձանագրվել է.

«(...)

Կատարված վերաճշտումների վերաբերյալ անհրաժեշտ է նշել հետևյալը՝ Երևանի քաղաքապետի՝ 2012 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 6760-Ա և 2014 թվականի օգոստոսի 22-ի թիվ 3238-Ա որոշումներում, որոնց հիման վրա «Երևանի հ. 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի զբաղեցրած հողամասի մակերեսը նվազեցվել է 0.1444 հա-ով, բերվել է նույն հետևյալ հիմնավորումը՝ «Տարածքի տեղազննումից և տեղագրական հանույթի վերաճշտումից պարզվել է, որ տարածքի քաղաքաշինական իրադրության փոփոխության արդյունքում ներկայումս «Երևանի հ. 64 նախադպրոցական ուսումնական հաստատության» ՀՈԱԿ-ի զբաղեցրած հողամասի փաստացի մակերեսը կազմում է ...»: Նման հիմնավորումը հիմք է տալիս եզրակացնել, որ քաղաքապետի ընդունած որոշումների միջև ընկած ժամանակահատվածներում նախադպրոցական ուսումնական հաստատությանը պատկանող հողամասի օտարված հատվածներում կատարվել են որոշակի փոփոխություններ, դրանք փաստագրվել են տեղագրական չափագրումների արդյունքում, ինչը և հիմք է հանդիսացել քաղաքապետի կողմից թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատության տարածքի որոշ հատվածների օտարմանն ուղղված որոշումների ընդունմանը:

Թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատության տարածքից առանձնացված հողամասերը աճուրդային կարգով վաճառվել են, այսինքն, եթե առանձնացված հողամասերի վրա առկա են եղել փոփոխություններ, ապա դրանք պետք է արտահայտվեն աճուրդային փաստաթղթերում՝ համապատասխան հատակագծերի, փաստաթղթային հիմնավորումների տեսքով: «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի կողմից 2012 թվականի դեկտեմբերի 19-ին և 2014 թվականի հոկտեմբերի 28-ին կատարվել են համապատասխանաբար 575,0քմ և 863,34քմ մակերեսներով առանձնացված հողամասերի սահմանների նշահարման աշխատանքներ, կազմվել են հողամասերի նշահարման սխեմաներ: Համաձայն նշահարման սխեմաների, քաղաքապետարանի կողմից թողարկված գլխավոր հատակագծերի, ինչպես նաև աճուրդային կարգով օտարվող հողամասերի վերաբերյալ կազմված ելակետային փաստաթղթային տվյալների՝ Երևանի քաղաքապետի 2012 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 6760-Ա և 2014 թվականի օգոստոսի 22-ի թիվ 3238-Ա որոշումներով առանձնացված հողամասերի վրա քաղաքաշինական փոփոխություններ նշված ժամանակահատվածներում չեն կատարվել, հողամասի գծային չափերը չեն փոփոխվել, դրանք հանդիսացել են շինություններով չծանրաբեռնված նախադպրոցական ուսումնական հաստատությանը պատկանող հողամասի հատվածներ և ոչնչով չեն առանձնացել այդ հողամասի մյուս հատվածներից:

Փորձաքննության արդյունքում հնարավոր է փաստել, որ քաղաքապետարանի կողմից ներկայացվող՝ «Տարածքի տեղազննումից և տեղագրական հանույթի վերաճշտումից պարզվել է, որ տարածքի քաղաքաշինական իրադրության փոփոխության արդյունքում ներկայումս «Երևանի հ. 64 նախադպրոցական ուսումնական հաստատության» ՀՈԱԿ-ի զբաղեցրած հողամասի փաստացի մակերեսը կազմում է...» ձևակերպումը չի համապատասխանել փաստացի իրավիճակին, որոշումների ընդունման

օրվա դրությամբ թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատության հողամասում որևէ փոփոխություն կատարված չի եղել:

Մինչև քաղաքաշինության նախարարի՝ 2014 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 263-Ն հրամանը՝ ՀՀ տարածքում գործող СНиП 2.07.01-89* «Градостроительство. Планировка и застройка городских и сельских поселений» շինարարական նորմով, այնպես էլ ՀՀ առողջապահության նախարարի՝ «Նախադպրոցական կազմակերպությունների սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» N 857 հրամանով և «ՀՀՇՆ-30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» նորմով՝ 275 երեխայի համար անհրաժեշտ նախադպրոցական ուսումնական հաստատության հողատարածքի մակերեսը պետք է կազմեր 9.625,0 քմ, այսինքն՝ 2002 թվականի հունվարի 9-ին, մանկապարտեզի անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը կատարելիս նորմերով սահմանված հողամասի անհրաժեշտ մակերեսը արդեն պակաս էր մոտ 3.172 քմ-ով (0.3172 հա): Կատարված վերաճշտումների արդյունքում «Երևանի հ.64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի զբաղեցրած հողամասի մակերեսը նվազեցվել է ևս 0.1444 հա-ով և պահանջվող մակերեսից արդեն պակաս է 4.616 քմ-ով (0.4616 հա):

Խախտելով «Կրթության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 4-րդ կետի՝ «Պետական ուսումնական հաստատությունների գույքն օտարվելու դեպքում կարող է օգտագործվել միայն ուսումնական նպատակներով» պահանջը, քաղաքապետարանը ոչ ուսումնական նպատակների համար, ոչ ստույգ ձևակերպմամբ օտարել է նախադպրոցական ուսումնական հաստատությանը պատկանող հողամասի երկու հողակտոր, առանց հաշվի առնելու գործող ՀՀՇՆ-30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» նորմի պահանջը՝ մանկապարտեզի հողամասի մակերեսի սահմանված նվազագույն նորմերի վերաբերյալ»:

56. ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանումից առգրավված՝ Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան փողոցի 5 հասցեում գտնվող թիվ 185 հիմնական դպրոցի /կոդ՝ 03060544/, Հ. Բեկնազարյան փողոցի 5/17 հասցեի /կոդ՝ 70040260/, Հ. Բեկնազարյան փողոցի 5/18 հասցեի /կոդ՝ 70040261/, Հ. Բեկնազարյան փողոցի 5/17 հասցեի /կոդ՝ 70074692/, Հ. Բեկնազարյան փողոցի 5/2 հասցեի /կոդ՝ 70042185/, Հ. Բեկնազարյան փողոցի 5/2 հասցեի /կոդ՝ 70047511/, Հ. Բեկնազարյան փողոցի 5/2 հասցեի /կոդ՝ 70040214/, Հ. Բեկնազարյան փողոցի 5/19, 5/20, 5/21, 5/22, 5/23, 5/24 և 5/29 հասցեների, Երևան քաղաքի Աճառյան փողոց 40 հասցեում գտնվող «Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի և Երևան քաղաքի Մ. Բաբաջանյան փողոց 8/2 հասցեի կադաստրային գործերում առկա փաստաթղթերը, ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունից առգրավված՝ Երևան քաղաքի Հ. Բեկնազարյան 5 հասցեում գտնվող «Երևանի թիվ 185 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Համլետ Քարամյանի կողմից 2013 թվականի օգոստոսի 27-ին ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության

պետ Արման Սահակյանին հասցեագրված դիմումը, ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետ Արման Սահակյանի կողմից 2013 թվականի սեպտեմբերի 28-ին Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին հասցեագրված թիվ 01/22-32/5280-13 գրությունը և Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի կողմից 2013 թվականի հոկտեմբերի 25-ին ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետ Արման Սահակյանին հասցեագրված թիվ 01/20-56346h գրությունը, Երևանի քաղաքապետարանից և ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված՝ թիվ 185 դպրոցի զբաղեցրած հողատարածքի 2002 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 2252-2002 գլխավոր հատակագիծը, Լևոն Հարությունյանին հատկացված Բեկնազարյան փողոց 5/17 հասցեի՝ թիվ 1250-2014 հողամասի հատակագիծը, Կարեն Ունուսյանին հատկացված Բեկնազարյան փողոց 5/18 հասցեի՝ թիվ 1251-2014 հողամասի հատակագիծը, Հարություն Մելոյանին հատկացված Բեկնազարյան փողոց 5/2 հասցեի՝ թիվ 1252-2014 հողամասի հատակագիծը, «Թիվ 185 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին հատկացված Հ. Բեկնազարյան փողոց 5 հասցեի՝ թիվ 1017-2014 հողամասի հատակագիծը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի 2014 թվականի հունիսի 11-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու մասին» թիվ 2235-Ա որոշումը և որոշման հավելվածը, Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովի համայնքային հողամասն աճուրդով վաճառելու մասին 2014 թվականի հուլիսի 11-ի նիստի թիվ 5, թիվ 6 և թիվ 7 արձանագրությունները, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի 2014 թվականի հուլիսի 17-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի 2014 թվականի հուլիսի 11-ին կայացած աճուրդային վաճառքի հաղթողներին հողամասեր տրամադրելու և հողամասերի օտարման պայմանագրեր կնքելու մասին» թիվ 2775-Ա որոշումը և դրան կից՝ թիվ 5, թիվ 6 և թիվ 7 հավելվածները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության կողմից կազմված Երևանի քաղաքապետի՝ «Պետական սեփականություն համարվող, Հ. Բեկնազարյան 5 հասցեում գտնվող թիվ 185 միջնակարգ դպրոցի շենք-շինությունների զբաղեցրած հողամասի սահմանները ճշտելու, հողօգտագործման իրավունքը ձևակերպելու և հատակագիծ թողարկելու մասին» որոշման նախագիծը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի 2014 թվականի փետրվարի 3-ի թիվ 284-Ա որոշումը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ՝ Ա. Քասարյանի կողմից 2013 թվականի նոյեմբերի 13-ին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանին հասցեագրված թիվ 18-06/1129 գրություն-եզրակացությունը և դրան կից սխեմաները, 2014 թվականի հուլիսի 23-ին կնքված հողամասի առուվաճառքի մասին թիվ 115/5-ԱԳ պայմանագիրը, 2014 թվականի հուլիսի 23-ին կնքված հողամասի առուվաճառքի մասին թիվ 116/5-ԱԳ պայմանագիրը, 2014 թվականի հուլիսի 23-ին կնքված հողամասի առուվաճառքի մասին թիվ 117/5-ԱԳ պայմանագիրը, Երևանի քաղաքապետի՝ 2002 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 2448-Ա

որոշումը և Աճառյան փողոցի 40 հասցեում գտնվող թույլ տեսնող երեխաների գիշերօթիկ դպրոցի զբաղեցրած հողատարածքի 2002 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2365-2002 գլխավոր հատակագիծը, Երևանի քաղաքապետի 2011 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 7305-Ա որոշումը և Աճառյան փողոց 40 հասցեում գտնվող «Թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ին հատկացված 2012 թվականի մարտի 23-ի թիվ 451-2012 հողամասի հատակագիծը, ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետ Արման Սահակյանի կողմից 2011 թվականի սեպտեմբերի 2-ին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Տարոն Մարգարյանին հասցեագրված թիվ 12.24/3003-11 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Ա. Քասարյանի կողմից 2011 թվականի սեպտեմբերի 13-ին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանին հասցեագրված թիվ 18-06/2-33000 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանի կողմից 2011 թվականի սեպտեմբերի 19-ին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Ա. Քասարյանին հասցեագրված թիվ 20/1-3300 գրությունը, Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Ա. Քասարյանի կողմից 2011 թվականի հոկտեմբերի 4-ին Երևանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանին հասցեագրված թիվ 18-06/2-33000 գրություն-եզրակացությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանի կողմից 2011 թվականի դեկտեմբերի 6-ին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Ա. Քասարյանին հասցեագրված թիվ 20/1-33000 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Ա. Քասարյանի կողմից 2011 թվականի դեկտեմբերի 15-ին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանին հասցեագրված թիվ 18-06/2-49395 գրություն-եզրակացությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության կողմից կազմված Երևանի քաղաքապետի՝ «Աճառյան փողոցի 40 հասցեում գտնվող շենք-շինությունների զբաղեցրած հողամասի սահմանները վերաճշտելու և հատակագիծ թողարկելու մասին» որոշման նախագիծը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 7305-Ա որոշումը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի՝ 2012 թվականի հուլիսի 13-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու մասին» թիվ 5198-Ա որոշումը և որոշման հավելվածը, Կարեն Ռոստոմյանին հատկացված Մ. Բաբաջանյան փողոց 8/2 հասցեի՝ թիվ 1496-2012 հողամասի հատակագիծը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի 2012 թվականի օգոստոսի 17-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի 2012 թվականի օգոստոսի 13-ին կայացած աճուրդային վաճառքի արդյունքները հաստատելու մասին» թիվ 5832-Ա որոշումը և դրա հավելվածը, 2012 թվականի օգոստոսի 20-ին կնքված հողամասի

առուվաճառքի մասին թիվ 70/5-ԱԳ պայմանագիրը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի 2012 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 6223-Ա որոշումը և հավելվածի քաղվածքը, 2012 թվականի սեպտեմբերի 11-ին որպես վաճառող Կարեն Ռոստոմյանի և որպես գնորդ Արա Ճորուխյանի միջև կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը, 2012 թվականի սեպտեմբերի 11-ին որպես վաճառող Կարեն Ռոստոմյանի և որպես գնորդ Լյուդվիգ Ասատրյանի միջև կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը, Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավար՝ Ա. Հարությունյանի կողմից 2012 թվականի սեպտեմբերի 4-ին Երևանի քաղաքապետ՝ Տ. Մարգարյանին հասցեագրված թիվ 24/1-6/2135ԵԼ գրությունը, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 605163 վկայականը, 2012 թվականի սեպտեմբերի 11-ին Ա. Ենգոյանի կողմից Էրեբունի Ավանեսով փողոց թիվ 64 մանկապարտեզի զբաղեցրած տարածքի վերաբերյալ կազմված սխեման, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Ա. Քասարյանի կողմից 2012 թվականի սեպտեմբերի 12-ին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանին հասցեագրված թիվ 18-06/2-43363 գրություն-եզրակացությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության կողմից կազմված Երևանի քաղաքապետի՝ «Ավանեսովի փողոցի 12 հասցեում գտնվող «Երևանի թիվ 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքայի ոչ առևտրային կազմակերպության զբաղեցրած հողամասի սահմանները վերաճշտելու և հատակագիծ թողարկելու մասին» որոշման նախագիծը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի 2012 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 6760-Ա որոշումը և թիվ 3204-2012 հողամասի հատակագիծը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի՝ 2013 թվականի հունվարի 13-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու մասին» թիվ 69-Ա որոշումը և որոշման հավելվածը, Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովի համայնքային հողամասն աճուրդով վաճառելու մասին 2013 թվականի փետրվարի 15-ի նիստի թիվ 1 արձանագրությունը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի՝ 2013 թվականի փետրվարի 22-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի 2013 թվականի փետրվարի 15-ի կայացած աճուրդային վաճառքի արդյունքները հաստատելու մասին» թիվ 710-Ա որոշումը և դրա հավելվածը, 2013 թվականի փետրվարի 26-ին կնքված հողամասի առուվաճառքի մասին թիվ 32/5-ԱԳ պայմանագիրը, Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավար՝ Ա. Հարությունյանի կողմից 2014 թվականի մայիսի 15-ին Երևանի քաղաքապետ՝ Տ. Մարգարյանին հասցեագրված թիվ 24/1-6/1638ԵԼ գրությունը, 2012 թվականի սեպտեմբերի 11-ին Ա. Ենգոյանի կողմից Էրեբունի Ավանեսովի փողոցի թիվ 64 մանկապարտեզի զբաղեցրած տարածքի վերաբերյալ կազմված սխեման, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ՝ Ա. Քասարյանի կողմից 2014 թվականի մայիսի 22-ին Երևանի

քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանին հասցեագրված թիվ 18-06/2-29253 գրություն-եզրակացությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության կողմից կազմված Երևանի քաղաքապետի՝ «Երևանի քաղաքապետի 2012 թվականի հոկտեմբերի 6-ի հ.6760-Ա որոշումը չեղյալ ճանաչելու, «Երևանի հ. 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի զբաղեցրած հողամասի սահմանները վերաճշտելու և հատակագիծ թողարկելու մասին» որոշման նախագիծը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի՝ 2014 թվականի հունիսի 9-ի թիվ 2189-Ա որոշումը և թիվ 1406-2014 հողամասի հատակագիծը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության կողմից կազմված Երևանի քաղաքապետի՝ «Երևանի քաղաքապետի 2012 թվականի հոկտեմբերի 8-ի հ.6760-Ա և 2014 թվականի հունիսի 9-ի հ.2189-Ա որոշումները չեղյալ ճանաչելու, «Երևանի հ. 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի զբաղեցրած հողամասի սահմանները վերաճշտելու և հատակագիծ թողարկելու մասին» որոշման նախագիծը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի՝ 2014 թվականի օգոստոսի 22-ի թիվ 3238-Ա որոշումը և թիվ 1988-2014 հողամասի հատակագիծը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 15-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու մասին» թիվ 85-Ա որոշումը և որոշման հավելվածը, Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովի համայնքային հողամասն աճուրդով վաճառելու մասին 2014 թվականի նոյեմբերի 14-ի նիստի թիվ 3 արձանագրությունը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի՝ 2014 թվականի նոյեմբերի 24-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի 2014 թվականի նոյեմբերի 14-ին կայացած աճուրդային վաճառքի հաղթողներին հողամասեր տրամադրելու և հողամասերի օտարման պայմանագրեր կնքելու մասին» թիվ 4407-Ա որոշումը և դրա հավելվածը, 2014 թվականի նոյեմբերի 25-ին կնքված հողամասի առուվաճառքի մասին թիվ 187/5-ԱԳ պայմանագիրը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ 495-Ա որոշումը և որոշման հավելվածի քաղվածքը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Ա. Մկրտչյանի կողմից 2020 թվականի հուլիսի 2-ին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի ժ/պ Ա. Մուրադյանին հասցեագրված թիվ 06/61031 գրությունը, ՀՀ կենտրոնական բանկից առգրավված՝ Արման Գալուստի Սահակյանի վերաբերյալ լազերային սկավառակում պարունակող բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության կանոնադրությունը, Արման Սահակյանին ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետ նշանակելու և վարչության պետի պաշտոնից ազատելու մասին ՀՀ վարչապետի որոշումները, Տարոն Անդրանիկի Մարգարյանին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ նշանակելու, այնուհետև՝ Երևանի քաղաքապետ ընտրելու մասին Երևանի քաղաքի ավագանու որոշումներով և

արձանագրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության, ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կանոնադրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի պաշտոնի անձնագիրը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի պաշտոնի անձնագիրը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հողհատկացման և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետի, առաջատար մասնագետի պաշտոնի անձնագրերը, Անդրանիկ Քասարյանին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի պաշտոնում նշանակելու և պաշտոնից ազատելու մասին Երևանի քաղաքապետի կարգադրությունները, Արսեն Ամյանին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի պաշտոնում նշանակելու և պաշտոնից ազատելու մասին Երևանի քաղաքապետի կարգադրությունները, Էդուարդ Վարդանյանին և Հայկ Կյուրեղյանին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունում պաշտոնի նշանակելու մասին հրամանները և կարգադրությունը, «Քաղաքաշինություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը, Տարոն Գրիգորյանի, Արամ Ենգոյանի, Հայկ Պետրոսյանի, Միքայել Հակոբյանի, Տիգրան Փոթիկյանի աշխատանքային պայմանագրերը, աշխատանքային պայմանագրի ժամկետի երկարացման համաձայնագրերը և հրամանները **ճանաչվել են որպես այլ փաստաթուղթ**:

Այսպիսով, գնահատելով քրեական վարույթով հավաքված ապացույցները վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության, իսկ բոլոր ապացույցների համակցությունը՝ բավարարության տեսանկյունից՝ պետք է արձանագրել, որ առկա են բավարար փաստեր ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Տարոն Մարգարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով՝ 4 դրվագ (համապատասխանում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերին), ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով (համապատասխանում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասին) և 447-րդ հոդվածի 1-ին մասով (համապատասխանում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 315²-րդ հոդվածին) հանրային քրեական հետապնդում հարուցելու համար, ուստի հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Տարոն Անդրանիկի Մարգարյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն ստանալու համար ՀՀ Ազգային ժողով դիմելու վերաբերյալ հսկող դատախազի առաջարկությունը և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 96-րդ հոդվածով, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ

սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով՝

Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ո Ւ Մ Ե Մ

Տալ համաձայնություն՝ ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Տարոն Անդրանիկի Մարգարյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **ԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**